2025, ՄԱՅԻՍ Բ, ԹԻՎ 10 (678)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հանրապետության տոնի առիթով

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ի հայրենիս և ի սփյուռս մեր ժողովրդի զավակներին և շնորհավորում Հանրապետության տոնի առիթով:

Այսօր ոգեկոչում ենք հիշատակները 1918 թ. մայիսյան հերոսամարտերի, մեր ժողովրդի դրսևորած աննկուն կամքի, միասնականության ոգու և քաջարի պայքարի, որի շնորհիվ հռչակվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Դարերի ընդմիջումից հետո հայրենի հողում վերականգնվեց հայկական պետականությունը՝ արժանապատիվ ու ապահով կյանք և լուսավոր գալիք կերտելու տեսիլքով:

Այսօր, երբ մեր ժողովուրդը կանգնած է նոր փորձությունների առջև և աղետալի պատերազմից ու Արցախի բռնազավթումից հետո կրում է արհավիրքների ծանր հետևանքները, Մայիսի 28-ի խորհուրդը կրկին հնչեցնում է անբեկանելի ճշմարտությունը, որ ժողովուրդը կարող է հաղթանակել, երբ միաբանված է մեկ նպատակով, մեկ ձգտումով ու բաղձանքով: Մեր անկախությունը մեր հայրերի սրբազան ավանդն է մեզ, որը պիտի փայփայենք և շարունակենք համատեղ ջանքերով շենացնել մեր երկիրը, զորացնել մեր պետականությունը:

Այս տոնական օրը աղոթում ենք աշխարհասփյուռ մեր ժողովրդի խաղաղության ու բարօրության, մեր բանակի հզորության, մեր պետության անվտանգության ու առաջընթացի համար: Թող մեր նախնյաց սխրանքները ոգեշնչեն մեզ՝ հավատալու մեր ուժերին, միավորվելու հայրենիքի, ընդհանուր նպատակների շուրջ և համատեղ ջանքեր ներդնելու մեր ազգային շահերի և իրավունքների պաշտպանության գործում:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերը և ողորմությունը թող լինեն մեզ հետ և ամենքի, այսօր և միշտ. ամեն:



Հանրապետական մաղթանք և այց Սարդարապատի հուշահամալիր Հանրապետության տոնի առիթով

Մայիսի 28-ին Հանրապետության տոնի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում կատարվեց Հանրապետական մաղթանք: Արարողությունը հանդիսապետեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը:

Հոգևորականաց դասը և ներկա ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Աստված Հայաստանի Հանրապետության անսասանության, խաղաղ և բարօր կյանքի համար:

Մաղթանքի ավարտին Նաթան արքեպիսկոպոսն ընթերցեց Հանրապետության տոնի առիթով համայն հայությանն ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը: Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի գլխավորությամբ այցելեցին Սարդարապատի հուշահամալիր, որտեղ Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Ադամյանի, թեմի եկեղեցականների ուղեկցությամբ հոգևորականները ծաղկեպսակ զետեղեցին հուշակոթողի առջև, ապա աղոթեցին մայիսյան հերոսամարտերում զոհված քաջորդիների հոգիների հանգստության համար:

Համբարձման տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Մայիսի 29-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը: Այս տոնին հիշատակվում է նաև 1441 թվականին Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելու պատմական օրը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ տերունի այս տոնը հռչակվել է նաև Սուրբ Էջմիածնի ուխտի օր:

Օրվա խորհրդի առիթով, Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանը:

Սուրբ Պատարագի իր քարոզում Սրբազան Հայրը, անդրադառնալով տոնի խորհրդին, նշեց, որ Քրիստոս համբարձումից առաջ պատգամեց Իր աշակերտներին անդադար քարոզել Աստծո խոսքը, տարածել Իր ուսմունքը և դարձի բերել մոլորվածներին:

Պատարագիչ Սրբազանը խոսեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելու պատմական հիշատակության մասին՝ փաստելով, որ ճիշտ էին արևելյան վարդապետները, երբ որոշում կայացրին Հայ Եկեղեցու հոգևոր կենտրոնը, Հայոց Կաթողիկոսության նստավայրը վերադարձնել իր աստվածօրհնյալ բնօրրանը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

«Սիրելի՛ հավատացյալներ, Մայր Աթոռն այն ամուր հիմնաքարն է, որին եթե հայ ժողովուրդը հավատարիմ մնա, ինչքան էլ հեռու լինի նրանից, ինչքան էլ տառապանքներ լինեն, միևնույն է, այս Աթոռից բխող լույսը հոգևոր ուժ պիտի տա մեր ազգի զավակներին՝ դիմագրավելու ամեն տեսակ դժվարության, առաջ շարժվելու Տիրոջ հարության ու համբարձման խորհրդով՝ հավատալով, որ լույսը միշտ հաղթական պիտի լինի խավարի դեմ»,— ասաց Հայկազուն Սրբազանը՝ մաղթելով, որ վերանորոգյալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը շարունակի լինել հայ ժողովրդի համար հոգևոր սնուցման աղբյուր և առաջնորդի հայորդիներին դեպի փրկություն մինչև մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:

Սուրբ Պատարագի ավարտից հետո Մայր Տաճարի Իջման Սուրբ Սեղանի առջև, հանդիսապետությամբ Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի, կատարվեց Հայրապետական մաղթանք, որի ընթացքում հոգևոր դասն ու ներկա հավատացյալ ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Աստված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության անսասանության, պայծառության ու շենացման համար:

Բեռնում մեկնարկել է միջազգային համաժողով՝ նվիրված Արցախի հայկական հոգևոր և մշակութային ժառանգության պահպանությանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջարկով Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը (ԵՀԽ) և Շվեյցարիայի Բողոքական Եկեղեցին մայիսի 26–28-ը Բեռն քաղաքում կազմակերպել են «Կրոնական ազատություն. հայկական հոգևոր, մշակութային և պատմական ժառանգության պահպանումը Արցախում/Լեռնային Ղարաբաղում» խորագրով միջազգային համաժողով:

Մայիսի 27-ին համաժողովը բացվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և ուղերձով:

Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար վերապատվելի Ջերրի Փիլային, Շվեյցարիայի Բողոքական Եկեղեցու նախագահ վերապատվելի Ռիտա Ֆամոսին, եկեղեցիների Համաշխարհային խորհրդի վարչության անդամներին, համաժողովի կազմակերպիչներին և աջակիցներին, որոնց ջանքերի շնորհիվ ևս մեկ անգամ միջազգային հարթակից բարձրաձայնվում է Արցախի՝ Լեռնային Ղարաբաղի բռնազավթումից հետո հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերների մասին:



«21-րդ դարում, որ ազգերի ու պետությունների կյանքում պիտի նշանավորվեր խաղաղության, համերաշխության ու արդարության հաստատմամբ, ցավոք, ականատես ենք պատերազմների, թշնամանքի ու ատելության հիմքի վրա իրականացվող ցեղասպանական գործողությունների ու էթնիկ զտումների, ինչպես և կրոնական ազատության և մարդու հիմնարար իրավունքների ոտնահարման դատապարտելի դեպքերի: Այս արհավիրքները վերապրեց նաև մեր ժողովուրդը Թուրքիայի ռազմական աջակցությամբ Ադրբեջանի կողմից Արցախի նկատմամբ իրականացված ագրեսիայի ու ոճրագործությունների հետևանքով: 2020 թվականից սանձազերծված 44-օրյա և ապա նաև 2023 թ. լայնածավալ ռազմական գործողությունների ընթացքում բռնազավթվեց և ամբողջապես հայաթափվեց Արցախը: Գրավված են Հայաստանի Հանրապետության սահմանային կենսական նշանակություն ունեցող զգալի տարածքներ, խաղաղության պայմանագրի կնքման գործընթացում ներկայացվում են նորանոր պահանջներ: Ադրբեջանը պատանդառված է պահում Արցախի քաղաքական ղեկավարների, քաղաքացիական անձերի և ռազմագերիների՝ իրականացնելով նրանց նկատմամբ ցուցադրական, շինծու դատավարություն՝ միջազգային իրավական նորմերի աղաղակող խախտումներով: Ակնհայտ է, որ այսօրինակ անօրինություններն ու նվաստացուցիչ դաժանությունները պայմանավորված են բացառապես ազգային պատկանելությամբ և հայատյացությամբ, որը և պատճառ է ոտնձգությունների հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ժառանգության ու պատմական սրբավայրերի նկատմամբ»,– նշեց Հայոց Հայրապետը՝ ընդգծելով, որ արցախահայությունը դարեր շարունակ հայրենի իր երկրում հավատքով և ազգային ինքնությանը հավատարիմ ոգով կերտել է իր արժանապատիվ գոյությունը, դպրության և արվեստի բարձրարժեք արարումներով նաև հարստացրել մարդկության մշակութային գանձարանը:

Նորին Սրբությունը ցավով արձանագրեց, որ Արցախի բռնազավթումից հետո առայսօր շարունակվում է Ադրբեջանի կողմից հայկական հնագույն հուշարձանների, քրիստոնեական սրբավայրերի, բնակատեղիների և գերեզմանոցների բարբարոսաբար ոչնչացումը: Ադրբեջանը հայոց հնամենի նշանավոր վանքերն ու եկեղեցիներն ինքնությունից զրկելու որդեգրած քաղաքականությամբ աղվանական է հռչակում Արցախի հայկական հոգևոր-մշակութային ժառանգությունը:

«Ադրբեջանի իշխանությունները շարունակում են անտեսել միջազգային հանրության կոչերը, հրաժարվում իրագործել Եվրախորհրդարանի՝ 2022 թվականի «Լեռնային Ղարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացման մասին» № 2582 բանաձևի պահանջները, ինչպես և մերժում Արցախի հայկական հուշարձանների վիճակի գնահատման ուղղությամբ փաստահավաք առաքելություն իրականացնելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությունը: Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քարոզչությանն է լծվել նաև Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Ալլահշուքյուր Փաշազադեն, որն օրեր առաջ հանդես եկավ ստահոդ հայտարարություններով»,– հավելեց Վեհափառ Հայրապետը՝ նշելով, որ Ադրբեջանի հայատյաց այս նույն գործելաոճով ժամանակին վայրագ ոչնչացման ենթարկվեցին Նախիջևանի հայկական սրբավայրերը, իսկ ճիշտ քսան տարի առաջ՝ 2005 թ., հողին հավասարվեցին Նախիջևանի՝ Հին Ջուղայի շուրջ վեց հազար խաչքարերը:

«Մշակութային ոճրագործությունները ցավալիորեն չեն ճանաչում աշխարհագրական սահմաններ և ամենուր են, որտեղ խաթարվում են մարդու և ժողովուրդների իրավունքները, դրսևորվում այլատյացություն և անհանդուրժողություն, անտեսվում հոգևոր ժառանգության վսեմ արժեքն ու կարևորությունը: Մշակութային ժառանգության նկատմամբ իրականացվող ոճիրներն արդարորեն դիտարկվում են ոչ միայն որպես մեկ ազգի, այլև համամարդկային արժեքների դեմ հանցագործություն:

Բարբարոսական այսօրինակ ոճրագործությունների անպատժելիությունը ամենաթողության մթնոլորտ է ձևավորում ոչ միայն Ադրբեջանի մշակութակործան ոճիրները շարունակելու համար, այլ նաև նախադրյալներ է ստեղծում և քաջալերանք հանդիսանում նմանատիպ և ավելի դաժան հանցագործությունների իրականացման աշխարհի այլ վայրերում»,– ասաց Հայոց Հովվապետը՝ հաստատելով, որ մշակութային արժեքների պաշտպանությունը բոլորի համար ոչ միայն նվիրական պարտավորություն է, այլև ազգերի ու ժողովուրդների պատմության, հավատքի և ինքնության պահպանության հրամայական:

Ապա դիմելով համաժողովի մասնակիցներին՝ Նորին Սրբությունն ընդգծեց. «Արցախի հոգևոր, մշակութային և պատմական ժառանգության պահպանության հարցն ավելի, քան երբևէ, հրատապ է այսօր, երբ Արցախի բռնի տեղահանված ժողովուրդը զրկված է սեփական հողի վրա ապրելու և արարելու, դարերով իր հավատքով կերտած մշակույթը պահպանելու և զարգացնելու իրավունքից: Ժամանակակից աշխարհում չպետք է հանդուրժվեն մարդկության ու մարդկայնության դեմ նման սոսկալի եղեռնագործություններ, ազատության, արդարության ու իրավունքի հիմնասյուները խարխլող արարքներ: Այո՛, ազգերի միջև հակամարտությունները պետք է կարգավորվեն խաղաղ ուղիներով, արդարությամբ ու փոխհամաձայնությամբ, ազգային ինքնության ու արժանապատվության հարգմամբ»:

Մեծապես կարևորելով նման համաժողովների անցկացումը՝ Հայոց Հայրապետը հույս հայտնեց, որ միջազգային դերակատար երկրները և իրավասու կառույցները գործուն քայլեր կձեռնարկեն՝ ուղղված Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանությանը, արցախահայության՝ իրենց հարազատ բնօրրան անվտանգ վերադարձի, ազատ ու արժանապատիվ ապրելու արդար իրավունքի վերականգնմանը և հայ գերիների շուտափույթ ազատ արձակմանը:

Վերջում Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց քույր Եկեղեցիներին, միջեկեղեցական կազմակերպություններին՝ դժվարին իրավիճակում հայ ժողովրդին ու Եկեղեցուն զորակցելու և արցախահայության իրավունքների պաշտպանության հարցում հետևողականություն դրսևորելու համար՝ արդյունավոր ընթացք մաղթելով համաժողովի աշխատանքներին:

Մայր Աթոռում տեղի ունեցավ շքանշանի հանձնման արարողություն

Մայիսի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, տեղի ունեցավ պարգևաբաշխություն: Եկեղեցանվեր ու ազգօգուտ իրագործումների համար Նորին Սրբությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշան շնորհեց տիար Արթուր Գրանցին, որի ազնիվ բարերարությամբ կառուցվել է Բելառուսի Հանրապետության մայրաքաղաք Մինսկի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:

Արարողությունը բացվեց Տերունական աղոթքով և Մայր Աթոռի Դիվանատան Ներեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Արժանապատիվ Տ. Պարույր ավագ քահանա Ավետիսյանի ողջույնի խոսքով:

Մեծարյալի կյանքին և ազգօգուտ ու հայրենանվեր գործունեությանն անդրադարձավ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը:

«Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերված Հայրապետական սրբատառ կոնդակն ընթերցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Հայրապետական սրբատառ կոնդակում ի մասնավորի ասվում է. «Առ Աստված հավատքով ու պատրաստակամ հոգով Դուք հանձն առաք Բելառուսում առաջին հայկական եկեղեցու կառուցումը՝ հոգևոր բերկրանք և խնդություն պարգևելով մեր ժողովրդի բարեպաշտ զավակներին:

....Նորակառույց եկեղեցու Սուրբ Խորանից բաշխվող երկնառաք շնորհներով զորանալու է բելառուսահայ համայնքի հոգևոր ու ազգային կյանքը՝ խարսխված տերունաշնորհ հավատքի, առ հայրենին և առ Եկեղեցին սիրո վրա, և Մեր զավակները Բարձրյալի օրհնության ներքո, հավատարիմ իրենց ինքնությանը, մեր ժողովրդի նվիրական ավանդներին ու արժեքներին, կերտելու են իրենց լուսավոր ու բարօր ապագան Բելառուսի օրհնյալ երկրում»:

Կոնդակի ընթերցումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարերարի կուրծքը զարդարեց Հայ Եկեղեցու բարձրագույն շքանշանով՝ վերստին բերելով նրան Հայրապետական իր օրհնությունն ու բարեմաղթանքները:

Պարգևաբաշխության առիթով իր սրտի խոսքն ասաց նաև շնորհընկալը՝ բարձր գնահատանքի ու պարգևի համար երախտագիտություն հայտնելով Հայոց Հայրապետին: Վերջինս Բելառուսի հայ համայնքի անունից նաև շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը Բելառուս կատարած նրա օրհնաբեր այցելության և նորակառույց եկեղեցու օծման համար:

Միջոցառմանը երաժշտական կատարումներով հանդես եկան Հայաստանի «Նոր անուններ» ծրագրի պատանի երաժիշտ-կատարողները:

Հանդիսությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Պահպանիչ» աղոթքով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արձագանքը Կովկասի մուսուլմանների վարչության նախագահի ստահող հայտարարություններին

Որերս Բաքվում կայացած Ղազիների խորհրդի նիստում Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Շեյխուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեն, ստանձնելով ադրբեջանական քարոզչամեքենայի կեղծիքի տարածման դերը, հերթական անգամ ատելությամբ ու թշնամանքով թիրախավորել է հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն:

Կեղծիքի տարածման մեջ գերազանցելով ինքն իրեն՝ Փաշազադեն հայտարարել է, թե իբր Հայաստանում և տարածաշրջանում տասնյակ դարեր գործող հայկական սրբավայրերը, անգամ 1700-ամյա Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը, գտնվում են «պատմական ադրբեջանական հողերում», և հայերը իբրև թե «յուրացրել են» այդ տարածքները: Անհեթեթ պնդումների շարքը Փաշազադեն եզրափակում է՝ Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացնելով որպես սպառնալիք տարածաշրջանի երկրների համար:

Զավեշտալի է թվում, որ խորհրդային իշխանությունների ազգաշինարարության արդյունքում 1930-ական թթ. երկրորդ կեսին «ադրբեջանցի» էթնոնիմն ստացած ժողովրդի հոգևոր առաջնորդը փորձում է վիճարկել պատմականությունը հայ ժողովրդի, որի հազարամյակների ստեղծագործ կյանքի ու հոգևոր-մշակութային ժառանգության արժեքն ու պատկանելությունը համընդհանուր ճանաչում ստացած իրողություններ են: Առավել քան զարմանալի է, որ այլոց արժեքների յուրացման մեջ հայ ազգին ուղղված մեղադրանքները ներկայացնում է մի երկրի ներկայացուցիչ, որի պետության անվանումն իսկ յուրացված է այլ երկրից ու ժողովրդից:

Նույն էժանագին գործելաոճն է ընկած նաև Ռուսաստանի ու Նոր Նախիջևանի թեմի անվան շուրջ Փաշազադեի կատարած շահարկման հիմքում: Ի գիտություն պետք է ընդունել, որ Դոնի Ռոստովի մերձակա բնակավայրերն անվանվել են «Նոր Նախիջևան» հենց ցարական Ռուսաստանի իշխանությունների որոշմամբ՝ որպես հարգանքի արտահայտություն պատմականորեն հայկական Նախիջևանից այդ տարածք տեղափոխված հայերի:

Ադրբեջանի հոգևոր առաջնորդի հրապարակային խոսքերում շարունակաբար տեղ գտնող թշնամանքի ու կեղծարարության նման դատապարտելի դրսևորումներն ինքնին վկայությունն են այն իրողության, որ



Ադրբեջանը հենց ինքն է, Փաշազադեի խոսքերով ասված, սպառնալիք տարածաշրջանի հարևան երկրների համար:

Եվ վերջում՝ հարկ է մեկընդմիշտ արձանագրել, որ սուտն ու կեղծիքը երբեք չեն կարող ճշմարտության վերածվել, որքան էլ հաճախ ու խանդավառությամբ կրկնվեն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Մայիսի 15-ին **Շվեյցարիայի խորհրդարանի Ազգային խորհրդի պատգամավոր Էրիխ Ֆոնտոբելին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Շվեյցարիայի Համադաշնության խորհրդարանի Ազգային խորհրդի պատգամավոր Էրիխ Ֆոնտոբելին:

Հանդիպմանը Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Շվեյցարիայի իշխանություններին Հայաստանին ցուցաբերվող զորակցության և հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարմանն ուղղված ջանքերի համար: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը գնահատանքով անդրադարձավ տիար Ֆոնտոբելի նախաձեռնած և Շվեյցարիայի խորհրդարանի երկու պալատների կողմից ընդունված բանաձևին՝ ի նպաստ բռնի տեղահանված արցախահայերի իրավունքների պաշտպանության և իրենց պատմական հայրենիք անվտանգ ու արժանապատիվ վերադարձի ապահովման:

Իր հերթին Էրիխ Ֆոնտոբելը Հայոց Հայրապետին ներկայացրեց «Լեռնային Ղարաբաղի համար խաղաղության ֆորում. հայերի վերադարձի հնարավորության ապահովում» բանաձևի ընդունման գործընթացը, ինչպես նաև դրա նպատակներն ու հետագա գործողությունների տեսլականը՝ ընդգծելով, որ արցախահայերի վերադարձը միջազգային իրավունքի արդար պահանջ է, և հարցը պետք է հետևողականորեն բարձրաձայնել ու ներկայացնել միջազգային համապատասխան ատյաններում:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաև Շվեյցարիայի հայ համայնքի կարևոր դերակատարությանը երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների հաստատման և երկրի առաջընթացի կերտման գործում:



Մայիսի 21-ին **Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ԵՄ դեսպաններին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Եվրոպական Միության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի դեսպանների տարածաշրջանային սեմինարի մասնակիցների հետ:

Հանդիպմանը ՀՀ-ում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար, ԵՄ դեսպան Վասիլիս Մարագոսը Նորին Սրբությանը ներկայացրեց ԵՄ դեսպաններին՝ ընդհանուր տեղեկություններ փոխանցելով հավաքի վերաբերյալ: Ամենայն Հայոց Հայրապետը, ողջունելով դեսպանների տարածաշրջանային սեմինարի մասնակիցների այցը համայն հայության հոգևոր կենտրոն, անդրադարձ կատարեց Հայոց Եկեղեցու առաքելությանը հայ ժողովրդի կյանքում:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում նշեց, որ դեսպանները թե՛ իրենց երկրներում, թե՛ ծառայության վայրերում վստահաբար առիթ ունեցել են շփվելու հայ համայնքների հետ, ծանոթանալու հայ ժողովրդի ազգային ավանդույթներին ու դավանած արժեքներին՝ հավելելով, որ սեմինարի անցկացումը Հայաստանում պիտի առիթ դառնա ավելի լավ ճանաչելու երկիրն ու նրա բազմադարյա ժառանգությունը, ինչպես և հաղորդ դառնալու Հայաստանում տիրող դժվարին կացությանը:

Նորին Սրբությունը նաև մտահոգությամբ անդրադարձավ հայ ժողովրդի առջև ծառացած անվտանգային մարտահրավերներին, Արցախի բռնազավթման, հայրենազրկված արցախահայության իրավունքների պաշտպանության և Ադրբեջանում մինչ օրս պահվող հայ գերիների վերադարձման խնդիրներին, ինչպես և Արցախի հայկական հոգևոր-մշակութային ժառանգության ոչնչացման ու յուրացման փաստերին՝ ընդգծելով տարածաշրջանում խաղաղության ու կայունության վերականգնման անհրաժեշտությունը: Նորին Սրբությունը կարևորեց ԵՄ երկրների ու կառույցների կողմից առավել գործուն քայլերի ձեռնարկումը Ադրբեջանի վարած հայատյաց քաղաքականության առնչությամբ:

Վերջում դեսպան Մարագոսը, շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետին ընդունելության համար, կարևոր նկատեց Հայ Եկեղեցու հետ երկխոսությունն ու գործակցությունը՝ ի նպաստ հարատև և արդար խաղաղության հաստատման:



Մայիսի 22-ին **Վերապատրաստման հերթական դասընթացի մասնակիցներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց եկեղեցականների վերապատրաստման դասընթացներին մասնակից Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից ժամանած հոգևորականներին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականաց վերապատրաստման ծրագրերի տնօրեն Գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը, ամփոփելով ծրագրի 2023–2025 թթ. ընթացիկ փուլը, որին մասնակցել է շուրջ 400 անձ, անդրադարձավ դասընթացների օգտակարությանը: Սրբազանն իր երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին ծրագրի և մասնակից հոգևորականների նկատմամբ հայրական հոգածության համար:

Այնուհետև ներկաներին իր օրհնությունը բերեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայոց Հովվապետը գոհունակություն հայտնեց վերապատրաստման ընթացքում արձանագրված արդյունքների առնչությամբ՝ ընդգծելով աստվածաբանական գիտելիքների վերաթարմացման, հովվական փորձառության փոխանակման, ինչպես նաև եկեղեցու և հասարակության առջև ծառացած մարտահրավերների ու դրանց հաղթահարման ուղիների շուրջ քննարկումների կարևորությունը:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց Վահան Սրբազանին և վերապատրաստման ծրագրերի փոխտնօրեն Տ. Շնորհք աբեղա Սարգսյանին դասընթացների կազմակերպման գործում ցուցաբերած նախանձախնդրության համար՝ տեղեկացնելով, որ դասընթացները հաջորդ փուլում կկազմակերպվեն ըստ տեսական ու գործնական աստվածաբանության թեմատիկ ուղղությունների՝ մերօրյա մարտահրավերներին և հոգևոր սպասավորության արդի պահանջներին համապատասխան:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը քահանա հայրերին պատգամեց կոչման բարձր գիտակցությամբ և անվերապահ նվիրումով շարունակել իրենց ծառայությունը Եկեղեցուն, ազգին ու հայրենիքին՝ իրենց համայնքներում և ամենուր հայորդիներին համախմբելով ի խնդիր հայրենիքում առկա դժվարությունների հաղթահարման և երկրի հզորացման:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Մինսկի նորակառույց եկեղեցին

Մայիսի 17-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի հրավերով մեկնեց Բելառուսի Հանրապետություն՝ մայրաքաղաք Մինսկում կառուցված հայկական եկեղեցու օծման առիթով:

Նորին Սրբության շքախմբի կազմում էին Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանը, Նորին Սրբության գավազանակիր Տ. Եսայի աբեղա Գրիգորյանը, Վեհափառ Հայրապետի հանձնակատար Տ. Գրիգոր աբեղա Մինասյանը, Կաթողիկոսական գրասենյակի տնօրեն Տ. Վահրամ ավագ քահանա Մելիքյանը և Մայր Աթոռի լուսարար Տ. Կոմիտաս քահանա Ղևոնդյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին Մինսկի օդանավակայանում դիմավորեցին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը, Բելառուսի Հանրապետության նախարարների խորհրդի կրոնի գործերով և ազգությունների հարցերով հանձնակատար Ալեքսանդր Ռումակը, թեմական խորհրդի ատենապետ Արամայիս Քամալովը, Բելառուսի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Սարգիս քահանա Չոփուրյանը, թեմի եկեղեցականներ և համայնքի ներկայացուցիչներ: Դիմավորման հանդիսավոր արարողության ընթացքում ազգային տարազներով հայ և բելառուս երիտասարդները Նորին Սրբությանը մատուցեցին ավանդական աղն ու հացը:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ պետական ու թեմական պաշտոնեության, այցելեց Մինսկի Հաղթանակի հրապարակ, որտեղ հուշարձանի առջև ծաղկեպսակի զետեղումից հետո աղոթք բարձրացրեց առ Աստված Հայրենական մեծ պատերազմում զոհված զինվորների հոգիների հանգստության և խաղաղության համար:

Մայիսի 18-ին՝ Սուրբ Խաչի երևման տոնին, Հայոց Հովվապետը շքախմբի ու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի ուղեկցությամբ մեկնեց նորակառույց եկեղեցի:

«Հրաշափառի» երգեցողության ներքո Նորին Սրբությունը թափորով մուտք գործեց եկեղեցի՝ օրհնելով այս հիշարժան առիթով Բելառուսի տարբեր համայնքներից Մինսկ ժամանած հայորդիներին, ապա սկսվեց Բելառուսում կառուցված առաջին հայկական եկեղեցու օծման արարողությունը:

Հընթացս սրբազան արարողության՝ շարականների և սաղմոսների ներքո ջրով և գինով լվացվեցին եկեղեցու Սուրբ Սեղանը, սյուները և մկրտության ավազանը: Այնուհետև «Հրաշափառ» շարականի ներքո խորան բարձրացվեց Սրբալույս Մյուռոնը, որով Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց եկեղեցու Սուրբ Սեղանի օծումը: Ապա Եզրաս



և Նաթան արքեպիսկոպոսներն օծեցին չորս ավետարանիչների անուններով խորանի սյուները, իսկ Արշակ արքեպիսկոպոսը՝ մկրտության սուրբ ավազանը: Օծման արարողության վերջում Վեհափառ Հայրապետը նորակառույց եկեղեցին կոչեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի անունով: Արարողությունն ամփոփվեց Հայրապետի «Պահպանիչ» աղոթքով, որից հետո բերկրառատ այս իրադարձության կապակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական պատգամն ու օրհնությունը բերեց Բելառուսի հայ համայնքին:

Նորին Սրբությունը գոհություն մատուցեց Աստծուն Բելառուսում առաջին հայկական եկեղեցու օծման բարեպատեհ առիթով՝ իր սերն ու շնորհավորանքները փոխանցելով ներկաներին: Իր խոսքում Վեհափառ Հայրապետը գնահատանքով արձանագրեց, որ Բելառուսի Հանրապետության իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ հնարավոր դարձավ եկեղեցու վերխոյացումը, ինչը նոր աշխուժություն պիտի հավելի համայնքի ազգային-եկեղեցական կյանքին:

«Առանձնակի գոհունակություն է Հայրապետիս համար արձանագրել, որ մեր ժողովուրդների հարաբերությունները խարսխված են քրիստոնեական ինքնության ընդհանուր արժեքների, բարեկամության, հայրենիքի ու ընտանիքի ավանդական ընկալումների, ինչպես և միասնական մաքառումների ու սխրանքների թանկ հիշատակների վրա»,— ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հույս հայտնելով, որ Բելառուսում բնակվող հայորդիների բարի անունն ու վարկը և տարբեր ոլորտներում արգասավոր գործունեությունը պիտի առավել սերտացնեն երկու ժողովուրդների բարեկամական կապերը և արդյունավորեն փոխշահավետ գործակցությունը:

Նորին Սրբությունը նաև անդրադարձ կատարեց տոնի խորհրդին և Տերունական Խաչի նշանակությանը: «Այս հրաշազարդ իրադարձությունը պանծացումն ու փառաբանումն է Քրիստոսի արյամբ նվիրագործված Սուրբ Խաչի: Խաչը քրիստոնյաներիս համար խորհրդանիշն է հաղթության, նշանն է մահվան հանդեպ կյանքի հաղթանակի: Խաչը հոգևոր զենք է ընդդեմ չարի: Խաչը հանձնառություն է՝ արիաբար գործելու հանուն ճշմարտության, ազատության ու արդարության: Կենարար Խաչը նաև Աստծո սիրո նշանն է, որով մարդկանց շնորհվում է հարության երկնային պարգևը»,— ասաց Հայոց Հայրապետը՝ ընդգծելով, որ կյանքի բոլոր հանգամանքներում Խաչը Քրիստոսի հետ լինելու և Նրան վկայելու, Նրա պատվիրաններով ապրելու ճանապարհն է:

Անդրադառնալով հայ ժողովրդի առջև Արցախի բռնազավթման հետևանքով ծառացած մերօրյա մարտահրավերներին՝ Նորին Սրբությունը հաստատեց, որ Խաչի կենարար ուժի հանդեպ անսակարկ հավատով է մեր ազգը դարերի ընթացքում դիմակայել բազում փորձությունների: «Մեր ժողովուրդը բազմիցս հալածվել է, ունեզրկվել, ցեղասպանվել, հայրենիքից բռնի տեղահանվել: Սակայն «Խաչ քո եղիցի մեզ ապաւէն, Տէր Հիսուս» սրտառուչ աղոթքը շուրթերին, առ Տերը հավատով շնորհ է գտել վերապրելու և ամենուր բարեկամ ազգերի ու երկրների զորակցությամբ ոտքի կանգնելու ու իր նոր կյանքը կերտելու: Այսօր էլ փորձության մեջ են մեր հայրենիքն ու հայրենաբնակ ժողովուրդը: Բռնազավթված և հայաթափված է Արցախը, անապահով են Հայաստանի սահմանները: Ադրբեջանում ապօրինաբար պահվում են հայ ռազմագերիներ և Արցախի պատանդառված ղեկավարությունը, յուրացման և ոչնչացման վտանգի առջև է Արցախի հոգևոր-մշակութային բազմադարյա ժառանգությունը: Գիտենք, որ այս վշտագին իրողություններով խռոված են նաև ձեր հոգիները, սակայն հավատում ենք, որ արդարությունը մեր ժողովրդի նկատմամբ պիտի վերականգնվի, և առ Քրիստոս հավատով կարող պիտի լինենք հաղթահարել ներկա բոլոր նեղությունները ու դժվարությունները: Նորաօծ այս եկեղեցին իր հոգևոր առաքելությամբ բարձրորեն հնչեցնելու է սիրո և խաղաղության կոչը՝ ընդդեմ հակառակությունների, թշնամանքի ու չարակամության, և ազդու պատգամը՝ համերաշխ գոյակցության ու համագործակցության: Այս տաճարը կոչված է զորացնելու ձեր հավատքն առ Աստված, ամրապնդելու ոգին լավատեսության և հույսը լուսավոր գալիքի»,— նշեց Վեհափառ Հայրապետը՝ հորդորելով բելառուսահայ համայնքին աստվածպաշտության ու ազգանվիրումի նախանձախնդրությամբ պայծառացնել սրբավայրը, որը պատվարն է Բելառուսի հայորդիների միասնության, երաշխավորը նրանց ինքնության և ազգային-հոգևոր արժեքների պահպանության:

Եկեղեցու օծման բերկրալի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց Ռուսաստանի և Նոր Նախիջևանի բարեջան առաջնորդ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանին՝ Բելառուսում եկեղեցական համայնքի ձևավորման տարիների հետևողական աշխատանքի համար, ինչպես նաև նորանշանակ հոգևոր հովիվ Տ. Սարգիս քահանա Չոփուրյանին՝ մաղթելով արդյունավետ ծառայություն Բելառուսի հայ համայնքում:

Նորին Սրբությունը նաև հայրապետական իր սերն ու օրհնությունը բերեց բարերար հայորդիներին՝ ի մասնավորի եկեղեցու հիմնադիր բարերարներ տիարք Արթուր և Մարեն Գրանց եղբայրներին, հովվատան և հայորդյաց տան բարերար տիար Վադիմ Ավանեսյանին և աստվածահաճո գործին աջակցած բոլոր անձանց:

Վերջում Հայոց Հովվապետը Սուրբ Գրիգոր Լուսավորչի բարեխոսության հայցով խնդրեց Ամենակալից, որ նորաօծ եկեղեցում հնչող աղոթքը լինի աղբյուր բարեպաշտ հայորդիների հավատքի պայծառության, երկնառաք շնորհների առատության, նրանց ընտանիքներից ներս մշտապես աստվածային օրհնությունների հեղման:

Արարողության ավարտին Նորին Սրբությունը նորաօծ տաճարին ընծայեց սրբանկար՝ Խաչելության պատկերով, նորակառույց եկեղեցու բարերարներ Գրանց Մարենին և Վադիմ Ավանեսյանին շնորհեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններ, իսկ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի առաջնորդ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանին ընծայեց պանակե:

Այնուհետև նորաօծ եկեղեցում, ձեռամբ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդի, մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ:

Եկեղեցու օծման արարողությանը ներկա էին Բելառուսի Հանրապետության նախարարների խորհրդի կրոնի գործերով և ազգությունների հարցերով հանձնակատար Ալեքսանդր Ռումակը, Համայն Բելառուսի Պատրիարքական փոխանորդ, Մինսկի և Զասլավսկի միտրոպոլիտ Վենիամինը, պետական այրեր, քույր եկեղեցիների և կրոնական հարանվանությունների ներկայացուցիչներ, ազգային բարերարներ, թեմական խորհրդի անդամներ, հայրենիքից և տարբեր այլ երկրներից ժամանած ուխտավոր հայորդիներ:

Սուրբ Պատարագի ավարտին կատարվեց մատաղի օրհնություն, օրը նշանավորվեց նաև ազգագրական պարերի կատարմամբ:

Նույն օրը եկեղեցու օծման պատմական առիթով տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ, որի ընթացքում Հայրապետական օրհնության գրեր հանձնվեցին եկեղեցու կառուցմանն իրենց աջակցությունը բերած հայորդիներին:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Կարգալույծ է հռչակվել Տ. Զավեն վարդապետ Յազիչյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Վիրահայոց թեմի Մառնեուլի շրջանի հայոց հոգևոր հովիվ Տ. Զավեն վարդապետ Յազիչյանը:

Տնօրենության համար հիմք են ծառայել Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Կիրակոս եպիսկոպոս Դավթյանի դիմումը և Կարգապահական հանձնախմբի եզրակացությունը Զավեն վարդապետ Յազիչյանի՝ հոգևոր ծառայության վայրն ինքնակամ լքելու վերաբերյալ: Կարգալույծ եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքին՝ Սարգիս Յազիչյան ավազանի անունով:

ՄԱՅԻՍ 28

Անկախության և պետականության խորհրդով

Պատմական իրողություններ և դեպքեր կան, որոնք անջնջելի դրոշմ են թողնում տվյալ ժողովրդի կյանքում: Այդ իրողություններից մեկն է 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը, որ մի նոր էջ բացեց մեր ժողովրդի պատմության մեջ:

Ներկայումս ամեն կերպ փորձ է կատարվում աղավաղելու և արժեզրկելու մայիսի 28-ի անկախության պատմական նշանակությունը մեր ազգային կյանքում, բայց փաստը մնում է անշրջանցելի. 1918 թ. մայիսի 28-ին հայ ժողովուրդն ավելի քան վեցհարյուրամյա ստրկությունից հետո կարողացավ բաղձալի անկախություն ձեռք բերել և վերականգնել հայոց պետականությունը:

Հայոց Ազգային խորհրդի պատգամավորներ Ավետիս Ահարոնյանի, Նիկոլ Աղբալյանի, Ալեքսանդր Խատիսյանի, Հովհաննես Քաջազնունու և նրանց գաղափարակիցների կողմից կատարված այս վճռական քայլը ճակատագրական նշանակություն ունեցավ մեր ազգային գոյաբանության հետագա ընթացքի համար: Ճիշտ է, առաջին հանրապետությունը երկար չգոյատևեց, բայց այն դարձավ անկախության հենարան՝ հասնելու ազգային ինքնուրույնության, ազատ և ինքնիշխան պետականության վերահաստատման:

Միաժամանակ Մայիսի 28-ը մեր պատմության մեջ խոյանում է որպես հիշողության կոթող, որ մեր ժողովուրդը ևս կարողություն ունի պայքար մղելու հանուն իր ազգային անկախության և ինքնիշխանության: Ազատ և անկախ պետականության գոյությունը պահանջում է խիզախություն, քաջություն և զոհողություններ, իսկ մեր ժողովուրդն այդ իրավունքը վաստակել է իր արիությամբ և հանուն անկախության ամեն տեսակի զոհողությունների պատրաստակամությամբ:

Մեր ներկան, դժբախտաբար, ոչ այնքան լուսավոր է, ինչպիսին պետք է լիներ:

Մեր ներկան, դժբախտաբար, ոչ այնքան հաստատուն է, ինչի համար մեր նախնիներն ու ժամանակակիցներն իրենց կյանքը զոհեցին:

Մեր ներկան, դժբախտաբար, պարտվողական, հարմարվողական հոգեբանությամբ է շղարշված:

Մեր ներկան, դժբախտաբար, անտարբերությամբ, ուրացությամբ է լեցուն, և այն, ինչ մեզ մատուցվում է, ընդունում ենք առանց ոչ մի ըմբոստության: Սևը՝ սպիտակ, հինը որպես նոր է մատուցվում, և մենք, փոխանակ հանուն արդարության պայքարը շարունակելու, հարմարվում ենք, կեղծ օրակարգերի համար զիջում անզիջելին, նույնիսկ մեր աշխարհահայացքն ենք փոխում, այնինչ այսօր

Հայկական բանակի օրհնումը Սարդարապատի ճակատամարտից առաջ, 1918 թ.

առավել, քան երբևէ, կարիք ունենք զորավոր դառնալու, խորագիտակ լինելու մեր պատմությանը, մեր անցյալին, որ կարողանանք հաստատուն հիմքերի վրա պահել ներկան՝ ապագան չվտանգելու համար:

Այսօր ավելի, քան երբեք, կարիք ունենք ՍԻԼԻԿՅԱՆՆԵՐԻ և ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆՆԵՐԻ, ՆԺԴԵՀՆԵՐԻ և ԱՆԴՐԱՆԻԿՆԵՐԻ՝ արթնանալու անկում տանող խոր թմբիրից և վերաուղղելու մեր շեղված ընթացքը: Ահավասիկ, Երևանի զորամասի հրամանատար, զորավար Մովսես Սիլիկյանի կոչը «*Դեպի սրբազան պատերազմ*», որն այսօր հնչում է նույնքան տագնապահարույց, որքան այն օրերին.

«Հայեր.

Շտապեցեք հայրենիքն ազատելու:

Հասել է րոպեն, երբ յուրաքանչյուր հայ, մոռանալով իր անձնականը, հանուն Մեծ Գործի՝ հայրենիքի փրկության և իր կնոջ ու աղջիկների պատվի պաշտպանության, պետք է գործ դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարվածելու համար:

Մենք չէինք ուզում կռվել. հանուն խաղաղության ու հաշտության պատրաստ էինք ընդառաջ գնալու ամեն տեսակ զոհողությունների, սակայն մեր նամարդ թշնամին ընթանում է իր ծրագրած ուղիով. նա, ըստ երևույթին, ստրկացնել է ուզում մեզ, իրոք, ուզում է ոչնչացնել մեր բազմաչարչար ազգը: Բայց քանի որ պիտի ոչնչանանք, ավելի լավ չէ՞, որ զենքը ձեռքներիս փորձենք պաշտպանել մեզ: Գուցե հաջողվի մեծ կռվով ձեռք բերել ապրելու իրավունքը:

Իսկ որ մենք կարող ենք պաշտպանվել, այդ ցույց տվին վերջին կռիվները մեր ճակատում, ուր մեզանից թվով գերազանց թշնամին նահանջի է դիմել մեր հերոսական գրոհի առաջ:

Հարկավոր է մի ճիգ ևս, և թշնամին վռնդված կլինի մեր երկրի սահմաններից, ուր մեր պապերն ու հայրերը երկար տարիներ արյուն-քրտինքով աշխատել են, գեթ մի կերպ հայթայթել իրենց օրվա ապրուստը:

Հայեր,

ժամանակ չէ դանդաղելու: Մինչև հիսուն տարեկան բոլոր տղամարդիկ պարտավոր են զենքի տակ գալու. ես պահանջում եմ ամենքից ներկայանալ իրենց զենքերով ու փամփուշտներով հայրենիքի պաշտպանության համար:

Հայուհիներ.

Հիշեցեք հինգերորդ դարի փափկասուն տիկնանց, որոնք ոգևորեցին իրենց ամուսիններին դեպի Մեծ Գործը անմահ Վարդանի կռիվների ժամանակ. հետևեցեք նրանց օրինակին, եթե չեք ուզում, որ ձեր պատիվը ոտնակոխ լինի, խրախուսեցեք այն վախկոտներին, որոնք զանազան պատրվակներով խուսափում են ճակատ գնալուց: Հավաքեցեք ռազմամթերք, հաց, հագուստ և ուրիշ մթերքներ…

Խորին կերպով համոզված եմ, որ իմ այս կոչը անարձագանք չի մնա, և երկու-երեք օրվա ընթացքում կկազմակերպվի մի այնպիսի քաջարի զորաբանակ, որին կհաջողվի վռնդել թշնամուն հայրենի հողի սահմաններից և ապահովել հայ ժողովրդի գոյությունը:

Հանո՛ւն բազմաչարչար ժողովրդի ֆիզիկական գոյության,

Հանո՛ւն ոտնակոխ եղած ճշմարտության,

Ոտքի՛ կանգնեցեք: Դեպի՛ սրբազան պատերազմ»:

Այո՛, այս կոչն ուղղված է նաև այսօրվա հայությանը՝ պաշտպանելու և պահպանելու հայրենիքը՝ այն սրբազան հողը, որ ոռոգվել է մեր հերոս նախնիների և մեր ժամանակի հայորդիների արյամբ:

Ժամանակն է, որ մեզանից յուրաքանչյուրն իր անձնական շահը մի կողմ դնի և խորհի ու գործի հայրենիքի շահի համար, իր ներդրումն ունենա այսօրվա Հայաստանի հզորացման գործում:

Հայտնի ճշմարտություն է՝ եթե ուզում ես հաղթել արտաքին թշնամուդ, նախևառաջ պիտի հաղթես ներքին թշնամուդ: Այլ խոսքով՝ մենք մեր միջից պետք է հեռու վանենք յուրայինի հանդեպ ատելությունը, քինախնդրությունը, չարությունը, եսակենտրոնությունը, անպատասխանատվությունը, պետք է ի մի հավաքվենք՝ դիմագրավելու համար մեր հայրենիքի առջև ծառացած գոյաբանական սպառնալիքներին, պահպանելու մեր ինքնիշխան պետականությունը:

Մեր փափկասուն տիկինները ևս ունեն իրենց ուսերին դրված պարտավորություններ, որոնցից գլխավորը բարոյական սերունդ կրթելն ու դաստիարակելն է, այնպիսի սերունդ, որ կճանաչի իր պատմությունը, կըմբռնի այն մեծ ժառանգության արժեքը, որ իր պապերն ավանդ են թողել իրեն, կգիտակցի հայրենիքի և Հայ Եկեղեցու գործոնն ու դերակատարությանը բոլոր ժամանակներում, ինչպես նաև պատրաստակամ կլինի և գիտակից կերպով կզոհի իր անձնականը հանուն ընդհանուրի:

Այս է ընթացքը դեպի անկախություն և այդ անկախությունը պահելու: Միշտ պետք է հիշենք, որ *անկախությունը չի տրվում, այն պետք է նվաճել* (Գարեգին Նժդեհ), այլ խոսքով՝ մեր անկախությունը ուրիշները չէ, որ պետք է պահպանեն, այլ մենք պետք է պաշտպանենք այն՝ հայրենիքի հանդեպ ունեցած մեր պարտավորությունների անմնացորդ կատարմամբ, անձնվիրաբար ծառայելով նրա շահերին ու բարօրությանը:

Մայիս 28-ը մեր նորագույն պատմության այն փառապանծ թվականն է, որ մեզ տալիս է այդ ոգին, և մոռանալ այդ թվականը նշանակում է հրաժարվել մեր անկախ լինելու սկզբունքից ու իրավունքից: Պետք չէ մոռանալ, որ *«այն ժողովուրդները, որոնք մոռանում են իրենց ազատությունը, անխուսափելիորեն կորցնում են այն»* (Գևորգ Չաուշ): Ուզո՞ւմ ենք չկորցնել մեր անկախությունը, ուրեմն ստվերի տակ չպահենք 1918 թ. մայիսի 28-ը, այլ դասեր քաղենք, որ կարողանանք արժանապատվորեն շարունակել մեր գոյության ընթացքը:

Վարանդ (Հակոբ) ՔՈՐԹՄՈՍՅԱՆ

Ատրպատականի թեմակալ առաջնորդ Ներսես Մելիք-Թանգյանի ազգանվեր գործունեությունը 1914—1921 թթ.

Հայ քաջարի ու գաղափարական հոգևորականների շարքում առանձնանում է Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես Մելիք-Թանգյանը: Մեծ է նրա դերը ոչ միայն պարսկահայության ազգային-եկեղեցական ու կրթական կյանքի կազմակերպման գործում, այլև համահայկական նշանակության իրադարձությունների բովում: Հայոց պատմության ամենադժվար ու վճռական պահերին նա ցուցաբերեց հոգևորականին և իսկատիպ առաջնորդին վայել մարդասիրական վարք, շրջահայեցություն, անհողդողդ կամք ու քաջություն՝ իր արժեհամակարգում միշտ բացարձակ պահելով երկու գաղափար՝ հայրենիքն ու քրիստոնեությունը:

Ներսես Մելիք-Թանգյանի գործունեությունը պատմական է եղել 1914—1918 թթ. հայ գաղթականությանն օգնելու, նրանց վերադարձը կազմակերպելու, Զանգեզուրի ինքնապաշտպանությանը զորակցելու և խորհրդային հալածանքներից ու բռնաճնշումներից Իրանում ապաստանած դաշնակցականներին պաշտպանության տակ առնելու առումով:

1914—1918 թթ. գաղթականության կենսական կարիքները հոգալու համար հայրենանվեր եկեղեցական-հասարակական գործիչը, ըստ ժամանակակիցների, շարունակ ելքեր էր փնտրում, բոլոր դռները բախում և անհրաժեշտ միջոցներ գտնում: Պաշտոնական մարմիններին դիմելուց բացի՝ նա շրջում էր Ատրպատականի և Սիսիանի գյուղերում՝ հորդորելով գյուղացիներին իրենց ունեցած պարենամթերքն ու դրամը կիսել գաղթականների հետ. «Նա բացառիկ անձնվիրությամբ և վարչական հմտությամբ ծառայում էր իր հոտին,— հիշում է Սիմոն Վրացյանը:— Նրա օրոք Ատրպատականի թեմը մեծ առաջադիմության մեջ էր, երբ վրա հասան մեծ պատերազմը և 1914 թ. դեկտեմբերյան աղետավոր նահանջը: Ուրմիո և Սալմաստի հայությունը ամբողջապես տեղահան եղավ: Թավրիզեցիներից էլ ով հնարուն էր, անցավ Կովկաս: Ներսես սրբազանը աղետահար ժողովրդի մեջ էր՝ նրա հետ բաժանելով ամեն նեղություն: Նրա ջանքերով կազմվեցին նպաստամատույց մարմիններ, նյութական միջոցներ հայթայթեցին, և թե՛ գաղթի ճանապարհին և թե՛ գաղթավայրերում ուտելիք, հագուստ և հաց տրվեց կարիքավորներին» («Յուշամատեան տ. Ներսէս արք. Մելիք-Թանգեանի», Թեհրան, «Ալիք» տպ., էջ 42):

1914 թ. դեկտեմբերին, երբ Ատրպատականի ռուսական զորամասը նահանջում է, և քրիստոնյա ազգաբնակչությանն առաջարկվում է կոտորածների չենթարկվելու համար զորքի հետ միասին փոխադրվել Ջուլֆա, գաղթի օրերին բոլորը՝ ռուս և ասորի, կաթոլիկ և բողոքական հոգևորականները, անտերության մատնելով իրենց ժողովրդին այդ ծանր, օրհասական օրերին, անցնում են Ռուսաստան, մնում է միայն Ատրպատականի հայոց թեմակալ առաջնորդ Ներսես եպիսկոպոսը՝ առանց ազգային ու կրոնական խտրականության ստանձնելով գաղթականության փրկությունը:

1915 թ. ապրիլին՝ Սալմաստի 2-րդ գրավումից հետո, Ներսես Մելիք-Թանգյանը գնում է Խոյ, Սալմաստ և Ուրմիա՝ իրավիճակին ծանոթանալու և գաղթականության վերադարձը կազմակերպելու: Իսկ 1915 թ. հուլիսի վերջերին, երբ սկսվում է Վանի բռնագաղթը, նա Թավրիզից անմիջապես մեկնում է Սալմաստ՝ գաղթականությանը սնունդ ապահովելով և տեղավորելով: 1917 թվականին, հավանաբար նկատի ունենալով Ատրպատական գաղթած վանեցիների խնամքը կազմակերպելը, Գևորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսը նրան նշանակում է նաև Վասպուրականի հայոց թեմակալ առաջնորդ:

1918 թ., երբ թուրքերը ներխուժել էին Ատրպատական, Ներսես արք. Մելիք- Թանգյանի հեռատես գործունեության, մասնավորապես՝ Իրանի կառավարության հետ խոհեմ, շրջահայաց դիվանագիտության և իր դիրքի ու հեղինակության շնորհիվ Թավրիզի հայությունը փրկվեց կոտորածներից: Նա անմիջապես դիմում է հղել պարսից շահին և Իրանում ԱՄՆ-ի դեսպանին՝ խնդրելով իրենց պաշտպանության տակ առնել հայերին: Եվ պարսից բարձրաստիճան պաշտոնյաներն ու ժողովրդական լայն զանգվածները պաշտպանեցին տեղի հայերին՝ թույլ չտալով թուրքերին հասնել իրենց նպատակին:

Առաջին աշխարհամարտի զինադադարից հետո, երբ թուրքերը հետ քաշվեցին Թավրիզից, Մակուում, Խոյում՝ հարևան պարսիկների մոտ, և Ս. Թադեի վանքում ապաստանած հայերն սպասում էին յուրայինների օգնությանը, և առաջնորդարանը՝ Մելիք-Թանգյանի գլխավորությամբ, շտապում է մահից փրկելու և պատսպարելու նրանց: ➥ էջ 8

Քաջությունը որպես առաքինություն Աստվածաշնչում

«Ոչ թե զենքերն են հաղթում, այլ Աստծո օգնությունը: Եթե Աստված չօգնի, զուր են բոլոր սպառազինությունները»:

Ս. Հովհաննես Ոսկեբերան

Քաջության օրինակներ մեր կյանքի ընթացքում շատ ենք տեսնում: Քաջություն կարող ենք համարել այն հատկությունը, երբ վտանգներից չընկրկելով՝ անգամ կյանքը զոհելու պատրաստակամությամբ հերոսը գործում է նպատակին հասնելու համար: Քաջությունը կարող է դրսևորվել երկու ձևով՝ բարոյական և ֆիզիկական, կարող է արտահայտվել նաև միաժամանակ: Քաջությունը՝ որպես բարոյահոգեբանական հատկանիշ, դրսևորվում է ամենից շատ պատերազմի դաշտում, երբ կյանքի համար խիստ վտանգավոր իրադրությունում զինվորականը կատարում է մարտական խնդիրը՝ ոգեշնչման օրինակ դառնալով մյուսների համար:

Աստվածաշնչում քիչ չեն քաջության օրինակները, և մեր Տերն Ինքն է մղում մեզ քաջագործությունների: Քաջությունը բացառապես և անկասկած քրիստոնեական առաքինություն է, քանի որ Քրիստոս ասում է. «Չկա ավելի մեծ սեր, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. 15:13):

Աստծո հանդեպ հավատն ու անչափ վստահությունը սուրբգրային հերոսների հոգում առաջացրել է վախը հաղթահարելու ուժ և մղել հիշատակման արժանի գործերի: Հին Կտակարանում որպես այդպիսին կարող ենք նշել, օրինակ, Դավիթ թագավորի հաղթանակը Գողիաթի դեմ: Դավթի քաջությունը ծնվում է ոչ թե նրա ֆիզիկական կարողությունից, այլ Աստծո հանդեպ վստահությունից. նա առանց վախի դուրս է գալիս հսկա Գողիաթի դեմ՝ հայտարարելով. «Տերը քեզ այսօր իմ ձեռքը կմատնի....» (Ա Թագ. 17:46): Եվ Դավիթը պարսատիկով ու քարով հաղթում է Գողիաթին, որից ահաբեկվում էին բոլորը, մի հարվածով գետնատեղի հավատալ Աստծուն: Եվ երբ Դարեհ արքան, որ շատ էր սիրում ու գնահատում Դանիելին, հաջորդ առավոտյան անձամբ գնաց գուբի մոտ՝ վստահ, որ առյուծները հոշոտել են նրան, և նրա մահը սգալու, շատ ուրախացավ՝ կենդանի տեսնելով: «Դանիել, Աստծո՛ ծառա, արդյոք քեզ քո Աստվածը, որին դու միշտ պաշտում էիր, կարողացա՞վ ազատել առյուծների երախից» (Դան. 6:20),— տխրությամբ ձայնում է արքան վերևից: Եվ գուբից լսվում է Դանիելի պատասխանը. «Արքա՛, հավերժ ապրի՛ր, քանի որ իմ սիրտը ուղիղ էր Նրա առջև, և քո դեմ էլ որևէ հանցանք չեմ գործել, Արքա՛, իմ Աստվածը Իր հրեշտակին ուղարկեց, և նա փակեց առյուծների երախը, և նրանք ինձ չվնասեցին» (Դան. 6:21–22):

Նիկոլա Կորդիե. Դավիթ արքա, XVII դ., Հռոմ, Սանտա Մարիա Մաջորե բազիլիկ եկեղեցի

Քաջությունը՝ որպես առաքինություն, արտահայտված է նաև Նոր Կտակարանում: Հիսուս Քրիստոս Իր աշակերտներին ասում է. «Մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինը սպանում են, բայց հոգին սպանել չեն կարող....» (Մատթ. 10:28): Իսկ առաքյալները, այս խոսքերի անմնացորդ հետևորդը լինելով, քաջաբար քարոզում են Քրիստոսի Ավետարանը՝ դիմանալով հալածանքներին, բանտարկումներին, քարկոծումներին, չվախենալով մահից: Պողոս առաքյալը Տիմոթեոսին գրած իր նամակում ասում է, որ Ավետարանի քարոզչության չարչարանքներին պետք է մասնակից լինել և չամաչել վկայել Տիրոջ մասին և այդ ամենն անել Աստծո զորությամբ, քանի որ «Աստված մեզ չտվեց երկչոտության հոգի, այլ՝ զորության, սիրո և զգաստության» (Բ Տիմ. 1:7):

Աստվածաշնչում քաջությունը ներկայացվում է որպես շնորհ, որն Աստված պարգևում է հավատացյալներին: Դա ներքին վստահություն է, որը բխում է Աստծո ներկայության զգացումից: Այն ենթադրում է բացարձակ սեր ու հավատ Աստծո հանդեպ, որ Նա առաջնորդում ու պահպանում է, և այդ զգացումն է, որ ուժ է տալիս, լսելի դարձնում մի ներքին ձայն. «Պետք չէ երկնչել ոչնչից և ոչ մեկից»: Քաջ լինել նշանակում է գործել հավատքով, նույնիսկ երբ ընթացքն անհայտ է:

Քաջության դրսևորումներից բացարձակ է հայրենիքի համար կատարված քաջությունը: Մեր Եկեղեցու բազմավաստակ հայրապետներից Սուրբ Ներսես Շնորհալին ասում է. «Ով որ սիրով ծառայում է իր հայրենիքին, նա ծառայում է նաև Աստծուն, քանզի Աստված ամենքին կարգել է սիրել իրենց ծննդավայրը»: Այս գաղափարը մենք տեսնում ենք Հին Կտակարանի էջերում, երբ Աստված իսրայելացիներին առաջնորդում է դեպի Ավետյաց երկիր:

Հնգամատյանում հանդիպում ենք բազմաթիվ տողերի, որտեղ Տերը Մովսեսին և իսրայելացիներին հորդորում է չվախենալ և չերկմտել այլազգի թշնամիներից և միայն ապավինել Աստծո զորությանը՝ հաղթության հասնելու համար: «Երկրորդ Օրենք» գրքում ասվում է. «Քա՛ջ եղիր ու զորացի՛ր, մի՛ երկնչիր ու մի՛ վախեցիր, մի՛ զարհուրիր նրանց ներկայությունից, քանի որ քո Տեր Աստվածն Ինքը պիտի գնա ձեր առջևից, ձեր մեջ: Նա չի լքելու ձեզ ու չի անտեսելու ձեզ» (Բ Օր. 31:6): Իսկ Հեսուի գրքում ասվում է. «Ահա ես պատվիրում եմ քեզ՝ քա՛ջ եղիր և արի՛, մի՛ վախեցիր և մի՛ սարսափիր, որովհետև քո Տեր Աստվածը քեզ հետ է ամենուրեք, ուր որ գնաս» (Հեսու 1:9): Սակայն իսրայելացիների սրտում տեղ էին գտնում անհավատությունը, տրտունջքն ու ապստամբությունը, որոնց պատճառով էլ ենթարկվեցին անպատում տանջանքների, իսկ եթե սրտով մաքուր և հոգով արի լինեին, հետևեին Աստծո պատգամներին և անտրտունջ կատարեին, ավելի վաղ կհասնեին խոստացված երկիրն ու կվայելեին այնտեղի բարիքները:

Հայ ժողովրդի պատմության մեջ քաջությունը դրսևորվել է որպես անձնազոհ, անմնացորդ պայքար հանուն ազգային գոյության, հայրենիքի և հավատքի պաշտպանության: Քաջության դասական օրինակներով հարուստ է մեր ժողովրդի պատմությունը: Հիշենք միայն Վարդանանց և Վահանանց դիմադրությունները, պայքարն արաբների դեմ 800-ական թվականներին, հայոց դիմադրությունները մոնղոլների, սելջուկ թուրքերի արշավանքների դեմ, Զեյթունի պաշտպանությունները, Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքալիսայի հերոսամարտերը, Սյունիքի պաշտպանությունը, Արցախյան ազատամարտը.... Քիչ չեն նաև այն անհատ հերոսները, որոնք վճռորոշ պահերի կարողացել են համախմբել և առաջնորդել ազգի գոյության ընթացքը. Վարդան Մամիկոնյան, Գևորգ Մարզպետունի, Անդրանիկ Օզանյան, Գարեգին Նժդեհ, Մոնթե Մելքոնյան, սերունդների մի ողջ փաղանգ, որ հասնում է մինչև մեր օրերը:

Այսօր՝ սարդարապատյան այս օրերին, մեր ժողովուրդը կարիք ունի հետ նայելու և վերհիշելու իր հերոսական պատմությունը, հիշելու և իր աչքի առջև մշտապես որպես փարոս ունենալու Մայիսյան հերոսամարտերը՝ քաջության և անձնվիրության բարձրագույն օրինակներ, երբ հայ ժողովուրդը համախմբվելով՝ անկարելին կարելի դարձրեց և հաղթելով թշնամուն՝ վերահաստատեց իր գոյության իրավունքը: Սարդարապատի հերոսամարտերը կարող ենք համեմատել Դավթի՝ Գողիաթի դեմ տարած հաղթանակի հետ. թվապես և տեխնիկապես թույլ կողմի հաղթանակը սպառազեն և բազմահազարանոց թշնամու հանդեպ՝ արդար նպատակի համար:

Աստվածաշնչյան քաջությունը ժամանակակից մարդուն հիշեցնում է, որ հավատքն ու վստահությունն Աստծու հանդեպ այն հիմքն են, որի վրա կանգնած մարդը կարող է դիմակայել վախին, փորձություններին, սպառնալիքներին, մահվանը: Քաջ լինել նշանակում է մնալ Աստծո կամքի հետ՝ անկախ հանգամանքներից: Դա մարդկային ուժով չէ, այլ Սուրբ Հոգու ներգործությամբ, ինչպես ասում է սաղմոսերգուն. «Տերն իմ լույսն է ու կյանքը, ո՞ւմից վախենամ. Տերն իմ կյանքի ապավենն է, ո՞ւմից ես դողամ (Սաղմոս 26:1):

Գայանե ՋԻԼԱՎՅԱՆ
Գևորգ սրկ. ԴԵՐՄԵՆՋՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Խաչի երևման տոնը

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Խաչի երևման տոնը նշում է Հինանց հինգերորդ կիրակի օրը՝ Սուրբ Զատկից 28 օր հետ՝ 35 օրվա շարժականությամբ: Այս տոնը կատարվում է ի հիշատակ փրկչական Խաչի հրաշալի երևման, որի պատմական ծալքերը հասնում են մինչև 351 թվականը: Երուսաղեմում այդ տարվա մայիս ամսին՝ ճիշտ Հոգեգալստյան տոնին՝ օրվա երրորդ ժամին (9:00-ին), երկնքում երևում է Փրկչի ամենահաղթ Խաչի նշանը՝ աստվածաբուխ լույս տարածելով Գողգոթայից մինչև Ձիթենյաց լեռը:

Խաչի անմեկնելի երևման ականատեսներից Կյուրեղը՝ Երուսաղեմի հայրապետը, այս առթիվ հատուկ նամակ է հղում Բյուզանդիայի Կոստանդին Բ կայսրին, որտեղ, վկայակոչելով Խաչի երևումը, հորդորում է ամուր մնալ քրիստոնեական ուղղափառ հավատքին, Ընդհանրական Եկեղեցու որդեգրած դավանանքի անհերքելի ճշմարտություններին: Նա այսպես է նկարագրում այս սքանչելի իրադարձությունը. «Եվ որովհետև Ս. Խաչափայտն արեգակից ավելի հզոր իր ճառագայթներն էր մատուցում տեսնողներին այն աստիճան, որ աստվածտեսության երկյուղով և ուրախությամբ բռնված՝ քաղաքում բոլորն անխտիր շտապում էին եկեղեցի. մանուկներն ու ծերերը, տղամարդիկ և կանայք, բոլոր տարիքի մարդիկ, մինչև իսկ տնարգել աղջիկները, բնիկները և օտարները, քրիստոնյաները և այլ տեղերից եկած ազգերը: Բոլորը միահամուռ, միաբերան օրհնում էին մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Միածին Որդուն՝ Սխրագործին»: Կյուրեղ Երուսաղեմացու այս նամակը 5-րդ դարում թարգմանվում է հայերեն: Նամակի ամբողջական տարբերակն առկա է Ճաշոց ծիսական մատյանում և ընթերցվում է Խաչի երևման տոնին:

Նույն ժամանակաշրջանում արիոսականության հերետիկոսական ուսմունքը, ըստ որի՝ Քրիստոս կատարյալ Աստված չէ, մեծ իրարանցում և պառակտում էր առաջացրել ամբողջ կայսրությունում: Նույնիսկ 325 թվականին՝ Նիկիայի առաջին տիեզերական ժողովից հետո, շատերը հրապուրվել էին այս կեղծ վարդապետությամբ: Քրիստոնեական վաղ շրջանի եկեղեցական պատմիչ Սոզոմենը գրում է, որ այս հրաշքի շնորհիվ շատ հեթանոսներ և հրեաներ եկան դեպի քրիստոնեությունը: Հիրավի, Խաչի տեսիլքը զորացրեց ոչ միայն ուղղափառ հավատացյալներին, այլև նպաստեց, որ բազմաթիվ արիոսականներ եկեղեցու գիրկը վերադառնան:

Հայ հնամենի պատմության մեջ էլ քիչ չեն եղել Խաչի երևումները: Սուրբ Կորյունը և քերթողահայր Մովսես Խորենացին Հայ Եկեղեցու վարդապետ Մեսրոպ Մաշտոցի մահվան և թաղման կապակցությամբ արձանագրում են, որ Վաղարշապատ քաղաքում օրեր շարունակ Խաչի լուսապայծառ նշանը փայլել է հենց այն տան վրա, որտեղ սուրբն ավանդել էր իր հոգին:

Այսպես՝ Տիրոջ Խաչելությամբ և հարությամբ հաստատվում է մարդկային կյանքի փրկության և աստվածաճանաչողության սուրբ խորհուրդը, որով արարչագործության թագն ու պսակը՝ մարդը, հնարավորություն է ստանում նոր արարած լինելու. «Եթե մեկը Քրիստոսի մեջ է, ապա նա նոր արարած է» (Բ Կորնթ. 5:17): Քրիստոս, խաչափայտին գամվելով, ջնջում է մեր մեղքերի պարտամուրհակը՝ նախանշելով այն ճանապարհը, որով պետք է քայլի սուրբ մարդը: Կյուրեղ Երուսաղեմացին ասում է. «Դավանում եմ Խաչը, քանզի գիտեմ Հարությունը»: Հետևաբար՝ Խաչը մեզ համար հույսի, սիրո, հաղթանակի, փրկության և պարծանքի նշան է. «Քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղ. 6:14): Ս. Հովհան Ոսկեբերանը, Աստծո շնչով լցված, գրում է. «Խաչը մեր փրկության նշանն է, Խաչը քրիստոնյաների հույսն է, Խաչը եկեղեցու հիմքն է, Խաչը սատանայի պարտությունն է, Խաչը որբերի հայրն է, Խաչը ամբարիշտների դատավորն է, Խաչը հիվանդների բժիշկն է, Խաչը օրվա զենքն ու գիշերվա պահպանիչն է, Խաչը ծարավողների աղբյուրն է, Խաչը լույսն է խավարում նստածների և ազատագրումը գերվածների, Խաչը անօրենի տապալումն է»:

Խաչի երևման տոնը հիշարժան է քրիստոնյաներիս համար: Այն խորհրդաբար վերահաստատում է Քրիստոսի մշտամնա և ամոքիչ ներկայությունը մարդկային կյանքում: Պատգամում է, որ մենք էլ Խաչին՝ խաչյալ և հարուցյալ Քրիստոսին ապավինելով՝ Գողգոթայի տառապալից ճանապարհից դուրս գանք և Ձիթենյաց սուրբ լեռանն արժանանանք, որտեղից համբարձվեց հաղթանակած, փառավորյալ Տերը:

Այսօր մեր կյանքն ամբողջովին լույսի և խավարի հակադիր պայքար է, և Խաչի երևման տոնը մեզ հիշեցնում է, որ Աստծո լույսը կարող է ճեղքել ցանկացած խավար: Երուսաղեմում բնակվողների նման մենք այսօր կոչված ենք տեսնելու այդ լույսը, ապրելու և սրբացվելու դրանով:

Այս դժնդակ օրերի խավար աղջամուղջի մեջ մեզ միայն մնում է սևեռուն հայացքով նայել Ճշմարիտ Լույսին՝ Քրիստոսին, և շարականաստեղծ բառերով աղաղակել. «Որ ծագեցեր մեզ լոյս մեծ զնշան յաղթութեան խաչի Քո, Թագաւո՛ր յաւիտենից, եւ ետուր պարիսպ ամրութեան հաւատացելոց Քոց, աշտարակ հզօր յերեսաց թշնամւոյն, աղաչեմք զՔեզ, Տէր, պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի Քո սուրբ»:

Ելենա ԱՂԱԽԱՆՅԱՆ
Հայկ սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ

Արարչագործությունը և մարդը

Հարցազրույց Տ. Իսահակ վրդ. Պողոսյանի հետ

— Հայր Սուրբ, երբևէ հայտնի մեծագույն ստեղծագործությունը՝ արարչագործությունը, Աստծո կողմից աշխարհաստեղծումն է: Ո՞րն է արարչագործության ընթացքի խորհրդաբանությունը:

— Հարցադրումը չափազանց լայն ուղեծիր ունի, այդուհանդերձ, եթե համառոտ ձևակերպենք, Աստված նախագետ է և իրերի բնությունը տեսնում է նախքան նրանց լինելությունը: Համաձայն քրիստոնեական ուղղափառ ընկալման՝ Աստված և՛ արարիչ է, և՛ բոլոր գոյերի սկզբնապատճառը. աշխարհն ստեղծել է ոչ թե ինչ-որ պատճառով կամ ստիպված, այլ կամավորաբար, կարգավոր ու նպատակադիր: Ծննդոց գրքի Ա 1—19-ը, ըստ էության, հանդիպման նկարագրություն է, հանդիպում Աստծո էության և գործունեության, Աստծո և Աստծո գոյության խորհրդի, ոգեղենի և նյութեղենի միջև: Այդ հարաբերության մեջ տեսանելի են և՛ Աստծո՝ Արարիչ լինելու հանգամանքը, և՛ Աստծո արարչագործության անսահմանությունը: Աստծո արարչության հիմքը բացարձակ սերն է, արարչությունն Աստծո դժգույն և թույլ արձագանքը չէ, ինչպես պատկերացնում էին պլատոնականները, այլ կատարելապես նոր ստեղծագործություն: Այն Աստծո հավիտենական զորության ճշմարիտ արտահայտությունն է, Նրա բազմախորհուրդ մտքի արտաքին իրականացումը:

Քրիստոնեական մտածողության մեջ Աստված և՛ արարիչ է, և՛ օրենսդիր, և՛ սահմանադիր: Արարչագործության մեջ ամեն բան կատարյալ աստիճանի ներդաշնակված և կարգավորված է խորհրդանշական բովանդակությամբ: Աստծո և արարվածի միջև գոյություն ունի ինչպես սկզբունքային տարբերություն, այնպես էլ նմանություն:

Արարչագործությունը բազում խորհուրդներ ունի. արարչագործության բազմազանությունն ու գեղեցկությունը բացահայտում են Աստծո կատարելությունն ու սքանչելիքները: Խորհրդաբանական իմաստով՝ տիեզերքը դիտարկվում է իբրև գիրք, «աներևույթ աստվածային աշխարհի խորհրդանշան»: Դիցուք՝ երկնքի բարձրությունն ու հեռավորությունը խորհրդանշում են Աստծո անմատչելիությունը, երկնքի լայնարձակությունը՝ աստվածային սիրո անսպառությունը, պայծառությունը՝ Աստծո գեղեցկությունը, հողը խորհրդանշում է Աստծո՝ ամեն գոյի արմատ լինելը, ջուրն ու օդը՝ որ առանց Աստծո չկան մտքի մաքրություն ու կյանք, և այլն: Եվ միայն մարդն ու հրեշտակային դասն են, որ բանականությամբ Աստծո պես են: Այս շարակարգում հարկ է գիտենալ նաև, որ արարչագործության խորհուրդը համերաշխ է փրկության խորհրդի հետ. հանդիպել Քրիստոսին՝ նույնն է՝ հանդիպել Սուրբ Երրորդությանը:

Արարչությունն ու փրկագործությունը Աստծո անսահման սիրո դրսևորումներն են: Արարչությունն ունի իր աստիճանակարգությունը՝ արարչագործություն—մարդեղություն—փրկագործություն: Ընտրյալ ժողովրդի պատմությունն իմաստավորվում է Սուրբ Հայտնությամբ՝ Աստծո ներկայությամբ: Ըստ այսմ՝ արարչության հիմնական գաղափարը վստահությունն է տիեզերքի հանդեպ: Ասվածից զատ՝ արարչությունը պաշտամունքի համար է, որ փառավորենք Արարչին: Սա օրենք է, որը երևան է գալիս Տիրոջ օրը պահելու հրահանգի մեջ և բովանդակում մարդու և Աստծու փոխհարաբերությունը, որն առավել ամբողջական բնութագրվում է «ուխտ» բառով: Ուստի՝ արարչությունը նախապատրաստությունն է հետևող բոլոր ուխտերի: Ուրիշ խոսքով՝ արարչագործությունն Աստծո և մարդու «համբույրի» (Ծնն. Բ 7) կամ սիրո պատմությունն է, որի իմաստն ու նպատակը բյուրեղանում են Հովհաննեսի Ավետարանի Ա 1—4, 9—10, 15—17 դրվագներում՝ Բանի՝ Աստծո խոսքի մասնակցությամբ:

Հին Կտակարանում նշմարվող արարչության վարդապետությունն իր լրումին է հասնում Նոր Կտակարանի մեջ՝ նոր արարչագործությամբ ու փրկությամբ: Քրիստոսով իրականանում է մի նոր արարչագործություն, որտեղ արարչագործությունն ու

փրկությունը համատեղվում են: Քրիստոս՝ իբրև համարարիչ և ժառանգորդ՝ բովանդակ իշխանությամբ երկնքում ու երկրի վրա, Ս. Հոգու միությամբ հաղորդակցության մեջ է մտնում մարդկության հետ՝ նոր արարածներ դարձնելու համար՝ արժանի նոր երկնքին ու նոր երկրին:

— Արարչագործության պսակը կամ գլուխգործոցը մարդն է՝ Աստծո եզակի պատկերը տիեզերքում: Աստված սրբազնագործությունը պսակեց մարդու արարմամբ և տվեց նրան Իր գործի շարունակության պատիվը: Բայց գիտության ծառի պտղի ճաշակմամբ մարդն անհնազանդություն դրսևորեց Արարչի հանդեպ և զրկվեց դրախտային կյանքից: Անմահության գաղտնիքն ինչո՞ւ Աստված թաքցրեց մարդուց: Անմահությունն անկատար մարդու համար անհասանելի՞ պիտի մնա մինչև կատարելությանը հասնելը:

— Աստվածաշնչի առաջին իսկ տողերից պարզ է դառնում, որ մարդու արարումը միանգամայն որոշակի նպատակ ունի: Հավիտենական և ամենազոր Աստված կամեցավ ստեղծել աշխարհը և Իր հայտնությունը շնորհել մարդուն՝ համաժամանակ և՛ հոգևոր, և՛ մարմնավոր էակին, որը գտնվում է Իր խնամատարության ներքո և ստեղծվել է իշխելու համար: Արարչագործության շարակարգում այնքան կարևոր ու նշանակալի է մարդու դերակատարությունը, որ անգամ հրեշտակները պարտականություն ունեն սպասավորելու նրան: Հետևաբար՝ մարդ արարածի կոչումն իր արժանիքը գիտակցաբար պահպանելն է և հոգևոր զարգացմամբ Աստծո հետ գործակցելը: Արարչագործության վերջում Աստված, իբրև «սքանչելիքների բարձրակետ» ու «արարչական կամքի միջնորդ», մարդուն ստեղծեց Իր պատկերով, որ վերջինս ձգտի անել այն, ինչ Արարիչը որոշել է:

Ձեր հարցին ամբողջական պատասխանելու համար հարկ է նաև անդրադառնալ քրիստոնեական մարդաբանությանը: Մարդաբանությունն արարչագործության գլխավոր թեման է, որովհետև մարդն արարչության կենտրոնն է: Որպես աստվածային ստեղծագործության գագաթնակետ և նպատակ՝ մարդն իր բարիքին հասնում է միայն Աստծո հետ միասնության մեջ: Ըստ Ս. Գրիգոր Նյուսացու՝ մարդը «միկրոաշխարհ» է, սակայն ոչ այն պատճառով, որ շրջապատող աշխարհն անցողիկ է, ինչպես համարում էին հին փիլիսոփաները, այլ քանի որ «տարբերվում է տիեզերքից և նմանվում Արարչի անսահման կատարելությանը», ուր արժանապատվությունը, անհատականությունն ու ինքնավարությունն անհրաժեշտ ու անբաժան տարրեր են: Քրիստոնեական մարդաբանության կենտրոնական թեման մարդու՝ Աստծո պատկերով և նմանությամբ ստեղծված լինելու իրողությունն է:

Մարդաբանությունն այն տեսությունն է, որը դավանում է մարդուն՝ որպես տիեզերքի առանցքի, և մարդկության բարօրությունն ու բարեկեցությունը դիտում է որպես վերջնապատակ: Քրիստոնեական մարդաբանության առանցքը, ինչպես նշեցի, մարդու՝ Աստծո պատկերով և նմանությամբ արարված լինելու իրողությունն է: Առավել տարածված տեսակետի համաձայն՝ Աստծո պատկերը մարդկային հոգին է՝ իր ամենաբարձր դրսևորմամբ՝ բանականությամբ: Քրիստոնեական մարդաբանության ճիշտ ընկալման համար ուշագրավ է Ս. Բարսեղ Կեսարացու այն տարածուն միտքը, համաձայն որի՝ Աստված մարդուն ստեղծեց որպես կենդանի էակի, որը կոչված էր «աստված լինելու»: Աստծու և մարդու կամքի մեկտեղումը, որով մարդը հարատևում էր դրախտում, ընդհատվեց գայթակղության հետևանքով գլուխ բարձրացրած հավակնոտ անհնազանդությամբ ու հպարտությամբ: Աստված, շնորհելով մարդուն Իր պատկերը, «բարեհակում» ձիրք էր պարգևել, որ երկրին տիրի ու մշակի: «Տարօրինակն այն է», որ Աստծո կողմից մարդուն տրված ազատ կամքի արդարացի գործադրումով այդ «կոչումը» նվաճելու համար հարկ էր հրաժարվել դրանից: Վերոհիշյալը տեղի չունեցավ և խաթարվեց մեղքի հետևանքով: Մեղքից ձերբազատվելու և աստվածանալու համար անհրաժեշտ է Աստծու կամքի և մարդու կամքի լիակատար մեկտեղում: «Արարենք մարդուն Մեր պատկերով (հմմտ. Կորնթ. ԺԵ 44) ու նմանությամբ» (հմմտ. Կողոս. Ա 15) սուրբգրային տեղին (Ծնն. Ա 26) ցույց է տալիս, որ մարդը մեծարվում է գերագույն փառքով՝ որպես արարչության պսակ: Իր ստեղծումով մարդը դրվում է նախախնամական և շնորհական միության մեջ իր Սկզբնապատճառի հետ: Հետևաբար՝ «մարդն Աստծո պատկերն է» ձևակերպումը հիմնական մարդաբանական ճշմարտությունն է, որով բնորոշվում են թե՛ մարդու «աստվածացումը», թե՛ կատարելության ձգտումը (հմմտ. Մատթ. Ե 48) և թե՛ քրիստոնեական ամբողջ բարոյական ուսմունքը:

Ծննդոց գրքի շարունակության մեջ հանդիպող միտքը՝ «Տեր Աստված ասաց. Ահա Ադամը դարձավ մեզ նման մեկը, նա գիտի բարին եւ չարը: Արդ, գուցե նա ձեռքը մեկնի, քաղի կենաց ծառից, ուտի եւ անմահ դառնա» (հմմտ. Սաղմ. Բ 4, ԼՁ 14, ԾԸ 9), ըստ ոմանց, բացառապես հեգնական բնույթ ունի, ըստ ոմանց՝ այլաբանություն-շրջասացություն է: Սակայն, ինչպես դիպուկ նկատել է Բյուզանդ Եղիայանը, խոսքն այն մասին է, որ «ամենագիտությունն ու անմահությունը վերապահված են միայն Աստծուն»: Ուրիշ խոսքով՝ կյանքի և անմահության ծառի այլաբանությունն այն է, որ կա սահմանագիծ, որից այն կողմ մարդու կարողությունը սահմանափակ է:

Այսօրինակ մի պատվիրանադրության էլ հանդիպում ենք Մատթ. ԻԴ 36-ում. «Բայց այդ օրվա եւ ժամվա մասին ոչ ոք չգիտե. ո՛չ երկնքի հրեշտակները եւ ո՛չ էլ Որդին, այլ՝ միայն Հայրը»: Այդուհանդերձ, պետք է ասել, որ Աստծո և մարդու միջև իրապես գոյություն ունի հավասարության մի եզր. մարդը բաժնեկից է Աստծո տերությանն ու օժտված է ազատ կամքով, դրա համար էլ նա «դուրս է գալիս կախյալ վիճակից, մերժում է հնազանդվել Աստծուն և իր կամքի շնորհիվ իրեն անկախ է հռչակում»: Հետայնու նրա կյանքի սկզբունքը ոչ թե հնազանդությունն է, այլ իր ազատ գիտակցությունն ու ցանկությունը, և վերջինս գործնականում դադարում է իրեն իբրև արարած նկատելուց, դիպուկ խոսքով՝ ապստամբում է: Մարդու հանդուգն մրցակցությունը սանձահարելու համար Աստված արգելում է նրան ձեռք մեկնել կենաց ծառին և այդպիսով անմահության հասնել, որովհետև այսկերպ մարդը կարող էր կրկին արդարացնել իրեն, ինչպես նաև անարգել Աստծո սահմանած օրենքը: Այս մասին անդրադարձ ունի նաև 5-րդ դարի Եղիշե վարդապետը. «Ադամը կասկածելով՝ փորձելով է, որ ճանաչում է չարն ու բարին, ոչ թե զորությամբ՝ վաստակով, և չի բացառվում, որ նույն կերպ էլ ուզենա անմահություն ձեռք բերել»:

— Աստված մարդուն ընտրեց Իր արարչագործությունը շարունակելու և պահպանելու ժառանգորդ՝ նրան կտակելով տիեզերքի աստվածահաճո տիրակալությունը և մարդկային կյանքի շարունակականությունը: Որքա՞նով է այսօր մարդն իրագործում իր աստվածատուր առաքելությունը:

— Ծննդոց Ա գլխի հիմնանպատակը մարդկության առաջացման պատմության նկարագրումն է, 6-րդ օրվա խորհուրդը ներկայացնելը: Մարդն իր նմանի մեջ ու միջոցով տեսնում և նմանվում է Աստծուն: Մարդը միակ արարածն է, որի հետ Աստված երկխոսություն ունի: Մարդն ստեղծվում է արարչության վերջում: Սա մի կողմից ցուցանում է մարդու առավելությունները, իսկ մյուս կողմից՝ որ մարդը մասնակցություն չունի արարչությանը:

Աստվածաբան Եզնիկ Կողբացին իր աշխատասիրություններում առաջադրել-հանդիպադրել է մարդու ազատ կամքի գաղափարը և գիտակցված չարիքի խնդիրը: Աստծո արարածների շարքում որևէ չար բան չկա, բայց մարդն իր մտքով ունակ է չարիք հաղորդելու երևույթին: Ըստ հեղինակի՝ բոլոր չարիքների պատճառը բարոյական սկզբունքի խախտում-խաթարումն է: Այլ խոսքով՝ շնորհիվ իր բազմախորհուրդ սիրո և անսպառ ողորմության՝ Աստված կամեցավ հաստատել սիրո արքայություն և Իր հայտնությունը պարգևել Իր պատկերն ու նմանությունը կրող արարածին: Շնորհիվ կամքի ազատության՝ «բարոյական ինքնավարության»՝ մարդը մշտապես ընտրության առաջ է՝ կամ ընտրելու բարին, կամ կորցնելու իր «արժանապատվությունը», ինչպես ներկայացնում է երանելի Պողոս առաքյալը (հմմտ. Գաղ. 5 13):

Աստվածաշնչում նկարագրված մի շարք դրվագներ գալիս են հաստատելու, որ թե՛ Աստծո անեծքը և թե՛ օրհնությունը տարածվում են համայնի վրա անփոփոխ սկզբունքով: Թվում է՝ աստվածային այս անվրեպ հետևողականության առկայությունը վաղուց պետք է մղած լիներ մարդկությանը՝ գոնե առավել գիտակից հատվածին՝ ավելի նախանձախնդրորեն ընդդիմանալու աշխարհում տեղի ունեցող աստվածամերժ ու մարդատյաց գործընթացներին (սոդոմականության խրախուսումը, միասեռ ամուսնությունների օրինականացման փորձերը, արհեստածին սեռերի առաջբերումը, քրիստոնյաներին բռնության ենթարկումն ու բնաջնջումը, մարդկանց ու հատկապես երեխաների և նրանց ներքին օրգանների թրաֆիքինգը, վանդալիզմը, թմրադեղերի, զենքի և այլն-ի առևտուրը, նաև հասարակությունների մեջ առկա բազմաձյուղ շերտավորումներն ու բևեռացումները, տղամարդու բազմակնության իրավունքի և կնոջ մենամուսնության պարտականության հանդիպադրումը, բազմակի ամուսնություններն ու բաժանումները), ինչպես նաև առավել նպատակային ու հանձնառու ընդհաղորդվելու աստվածահաճո ձեռնարկներին: Սակայն, դժբախտաբար, «մարդիկ յուրյանց ինքնակամությամբ բոլորովին այլ ճանապարհներ են բռնում՝ թե՛ յուրյանց խորհուրդներով, թե՛ գործերով ու թե՛ լոկ աշխարհային ոգով» (հմմտ. Ես. ԾԵ 8, Սաղմ. Բ 1—3, Հռոմ. Ա 18, Եփես. Ձ 16): Սակայն, անկախ մարդկության բռնած ընթացքից, միևնույն է, աստվածային անշեղ օրենքով աշխարհն ընթանալու է դեպի իր նպատակը, ինչպես որ ընթերցում ենք Ս. Մատթեոսի Ավետարանում. «Եվ արդ, ձեզնից ո՞վ կարող է հոգս անելով՝ իր հասակի վրա մեկ կանգուն ավելացնել» (Մատթ. Ե 27): ➥ էջ 8

Ատրպատականի թեմակալ առաջնորդ Ներսես Մելիք-Թանգյանի ազգանվեր գործունեությունը 1914—1921 թթ.

➥ էջ 5

Թավրիզ են տեղափոխվում Խոյի կոտորածից ազատված հայերը:

Բնութագրելով Ներսես արք. Մելիք-Թանգյանի գործունեությունը՝ Թեհրանում հրատարակվող «Ռաֆֆի» տարեգիրքը նշում է. «....Բաւական է յիշատակել 1915—1916-ին Արևմտեան Հայաստանից Ատրպատական ապաստանած բազմահազար գաղթականների, 1918-ին տաճիկ բանակների ներխուժման հետևանքով Ատրպատականի հայաշատ գաւառներից գաղթած գիւղացիների եւ 1921-ին Հայաստանից Թաւրիզ անցած աւելի քան տասն հազար տարագիրների պաշտպանութեան ու խնամատարութեան գործին բերած նրա հայրական գորովագութ հոգատարութիւնը, Երկրորդ աշխարհամարտի ընթացքին Ատրպատականի հայ համայնքին սպառնացող վտանգալից փորձութիւններին դիմագրաւելու իր ճիգերն ու զոհողութիւնները, պատկերացնելու համար այն փոթորկալի կեանքը, որ ունեցաւ Մելիք-Թանգեան սրբազանը, առընթեր իր թեմի ազգային–եկեղեցական ու կրթական մարզերին վերաբերող ընթացիկ աշխատանքներին»:

Ներսես Մելիք-Թանգյանի ազգային-քաղաքական գործունեության կարևոր դրվագ է նաև Զանգեզուրի ինքնապաշտպանությունը: Դեռևս 1905 թվականին՝ հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, ինչպես վկայում են ժամանակակիցները, նա դարձել էր Զանգեզուրի հայության պայքարի ոգին և հոգևոր առաջնորդը: Այդ շրջանում նա Երևանի թեմի Տաթևի փոխանորդության առաջնորդն ու վանահայրն էր և իր անվեհեր վարքով ոգևորելով տեղի հայությանը՝ միաժամանակ ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով համագործակցում էր Հայ հեղափոխական դաշնակցության որոշմամբ Սեբաստացի Մուրադի գլխավորությամբ Զանգեզուր եկած ֆիդայիներ Կայծակ Առաքելի, Կորյունի և մյուսների հետ՝ կազմավորելով կամավորական ջոկատներ: Նա անդադար շրջում էր հայկական գյուղերում, քաջալերում ժողովրդին, ինքնապաշտպանություն քարոզում, միաժամանակ կորովի դիմումներ ուղղում փոխարքային ու իշխանություններին՝ նրանց հասցնելով հայության ողբերգական վիճակն ու բողոքը: Այդ օրերից սկսած՝ ժողովուրդը նրան անվանեց «Զանգեզուրի Ղևոնդ Երեց»: Ներսես Մելիք-Թանգյանը համագործակցել է նաև Անդրանիկ Զորավարի հետ:

Ներսես Մելիք-Թանգյան

Ներսես Մելիք-Թանգյանի ավանդը մեծ է նաև հայ գաղթականության՝ Ատրպատական վերադարձը կազմակերպելու գործում: Ատրպատականում հայության վերաբնակեցումը հետագայում ռազմաքաղաքական առումով նպաստեց Հայաստանի առաջին հանրապետության անվտանգության ապահովմանը: Ատրպատականի հայոց թեմակալ առաջնորդը գործեց նաև հայոց նորանկախ հանրապետության և Իրանի իշխանության միջև կապերի սերտացման ուղղությամբ: Իսկ երբ Հայաստանի խորհրդայնացումից հետո մահվան դատավճռի առաջ էին առաջին հանրապետության ղեկավարությունը և դաշնակցականները, նա Թավրիզում իր հոգածության տակ առավ բոլորին:

Ներսես Մելիք-Թանգյանն ամեն հնարավոր աջակցություն ցույց տվեց նաև Գարեգին Նժդեհին Զանգեզուրի ինքնապաշտպանության ժամանակ՝ ուղարկելով զենք, պարենամթերք, դրամ: Ծանոթ լինելով Նժդեհի ռազմավարական տաղանդին և մտքին՝ նա հույս էր փայփայում զորավարի առաջնորդությամբ թուրք-բոլշևիկյան հարձակումները կասեցնելու և Հայաստանն ազատելու: Եվ Նժդեհի առաջնորդած պայքարի շնորհիվ է, որ այսօր Զանգեզուրը Հայաստանի կազմում է, իսկ առանց Զանգեզուրի՝ դրվելու էր Հայաստանի՝ որպես հանրապետության լինելության հարցը: Ըստ պատմական որոշակի տեղեկությունների՝ Զանգեզուրի՝ Ադրբեջանին բռնակցելու պարագայում Հայաստանը վերածվելու էր մարզի և միացվելու Վրաստանին:

Ներսես Մելիք-Թանգյանի հայրենանվեր գործունեությունն առիթ դարձավ խորհրդային տարիներին նրա հանդեպ հետապնդումներ սկսելու: Խորհրդային իշխանություններն ամեն քայլի դիմեցին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդեպ ճնշումներ գործադրեցին, չեկիստներ ուղարկեցին Իրան՝ նրան էջմիածին վերադարձնելու, ձերբակալելու և դատելու համար, մինչև իսկ մահափորձ կազմակերպեցին նրա դեմ: Բայց թիկունքում ունենալով նաև իրանահայության մեծ սերն ու պաշտպանությունը՝ քաջ հոգևորականը չենթարկվեց ոչ մի հրահանգի՝ համապատասխան բացատրագրեր ուղարկելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ավելին. Հայ Առաքելական Եկեղեցու դեմ խորհրդային ժամանակներում սանձազերծված բռնաճնշումների ժամանակ Իրանից թեմակալ առաջնորդը զորակցություն էր հայտնում Մայր Աթոռին՝ դիմում-բողոքներ հղելով այդ առիթով:

Մեծ հոգևորականի անձնվեր գործունեությունը գնահատանքի արժանացավ ոչ միայն իր հարազատ ժողովրդի և Մայր Աթոռի կողմից. անձնվեր ծառայության համար Մայր Աթոռը Ներսես Մելիք-Թանգյանին արժանացրեց արքության պատվի՝ շնորհելով նրան արքեպիսկոպոսի աստիճան: 1919 թ. Իրանի կառավարությունը հայոց թեմակալ առաջնորդին շնորհեց պետական պարգև՝ պարգևատրելով նրան «Առյուծ-արև» շքանշանով:

Արփինե ԻՇԽԱՆՅԱՆ

Արարչագործությունը և մարդը

➥ էջ 7

— Ընդունված է «արարչագործություն» հասկացությունը կիրառել միայն Աստծո պարագայում՝ որպես Նրա հատկորոշիչ: Մարդը ևս աստվածապարգև հատկությամբ ստեղծագործում է: Մարդու դեպքում չե՞նք կարող կիրարկել «արարչագործություն» եզրույթը: Օրինակ՝ մանկան ծնունդը կամ արվեստի մեծագույն ստեղծագործությունը, որոնք երկունքով են լինում, նույնպես արարչագործությո՞ւն չեն: Մարդկային գիտակցությունն առհասարակ չի՞ կարող հասնել արարչագործության:

— Հարկ է գիտենալ, որ արդի ազատականացումը հանգեցնում է նկատելի փոփոխությունների ամենատարբեր ասպարեզներում, այդ թվում՝ տղամարդ–կին հարաբերություններում, նրանց առաքելության ու գործառույթների մեջ: Նախ պետք է պահպանել ինչպես տղամարդկանց, այնպես և կանանց ազատությունը, ինչը ենթադրում, նաև պահանջում է քրիստոնեության մեջ վաղուց գոյություն ունեցող հայեցակետերի ուսումնասիրում, լրացուցիչ վերլուծում և մեկնաբանում: Նոր Կտակարանն ընդգծում է ընտանեկան կյանքի հոգևոր կողմը (հմմտ. Ա Տիմ. Ե 8), ըստ որի՝ ընտանիքը միայն իր գոյությամբ չէ, որ ծառայում է սիրո նպատակին, այլ նաև գործունեությամբ: Քրիստոնյա ընտանիքը տղամարդու և կնոջ միությունն է, որը հիմնված է ոչ թե պարզ փոխօգնության, ցանկությունների կամ ընդհանուր շահերի վրա, այլ աստվածադիր օրհնության, որտեղ Աստծո պատվիրանները փոխանցվում են սերնդեսերունդ, և ընտանիքը «հավակնում է» դառնալու «տնային» կամ «առտնին եկեղեցի» (հմմտ. Կող. Դ 15): Արարչագործության պատմությունը ցույց է տալիս, որ Աստված աշխարհն ստեղծել է իբրև մեկ միասնական ընտանիք, որի կենտրոնը մարդն է: Մարդու արարումով է, որ շունչ է ստանում ողջ կենդանությունը. «....Եվ մարդ չկար, որ մշակեր հողը...» (Ծննդ. Բ 6), և նախախնամորեն մարդուն է վերապահված միասնական ընտանիքի երաշխավորությունը. «Ահա ձեզ տվեցի...» (Ծննդ. Ա 29):

Աշխարհի՝ որպես մեկ միասնական ընտանիքի մասին է վկայում և այն փաստը, որ մարդու պատվիրանազանցության հետևանքը տարածվում է ողջ կենդանական աշխարհի վրա: Սկզբունքի գործադրման ականատեսն ենք նաև առաջին եղբայրասպանության պարագայում, պատվիրանազանցությունից առաջ և հետո կատարված դեպքերի շրջագծում: Քրիստոնյայի համար թե՞ Հին Կտակարանի փորձառությունը և թե՞ Նոր Կտակարանի հորդորները ո՛չ թե ինքնանպատակ հրամաններ են, այլ վերահաս փորձանքներից ու դժվարություններից հեռու պահելու և գործնականում քրիստոնեական բարոյական արժեհամակարգին առնչակցելու հնարավորություն:

Մարդու մեջ Աստծո պատկերն ամենացայտուն կերպով արտահայտվում է նրա ստեղծագործելու ունակության միջոցով: Ստեղծելը կամ ոչնչից արարչագործելը միայն Աստծուն է բնորոշ և Նրա հատկությունն է: Մարդը բնականորեն, հոգով ու մարմնով իր նախորդների ժառանգն է, իսկ էապես՝ Աստծո արարչական գործունեության հետևանքը: Ուստի, Սուրբ Գիրքը մի կողմից՝ ժառանգականությունն է շեշտում, մյուս կողմից՝ Աստծո արարչական կամքի նշանակությունը: Դառնալով ընտանիքին՝ հարկ է նշել, որ այն սկզբնավորվում է Աստծո օրհնությամբ, հետևապես՝ Աստծո՛ համար է և առաքելություն ունի ապահովելու ինչպես հոգևոր-բարոյական կրթություն (հար և նման հանրային կյանքում եկեղեցու ունեցած գործառույթի), այնպես էլ սիրով, միությամբ ու հոգատարությամբ պայմանավորված դաստիարակություն, ինչը կրկին ստեղծագործական ընթացք է ենթադրում: Երկու տարբեր սեռերի փոխադարձ ձգտումը Արարչի կողմից աշխարհ ներմուծված ձգողականության տիեզերական օրենքի մի մասնավոր արտահայտություն է, որն արարչության շաղախն է:

Այսպիսով՝ ամենաբարի Աստված, չունենալով որևէ պակասություն, չկամեցավ միանձնյա վայելել «յիւրական ճոխութիւնը», այլ «արար զմարդն ի պատկեր իւրոյ» (հմմտ. Ծննդ. Բ 7), ինչը նշանակում է՝ կյանքը պատկանում է Աստծուն և տրվում է մարդուն իբրև պարգև, թեպետև Աստված իշխանություն ունի նաև մահվան վրա:

Դժբախտաբար, մարդը «չկամեցավ» գիտակցել իր ազատ կամքի ու կոչման (հմմտ. Ա. Կորնթ. ԺԵ 45—47) առավելությունը և զրկվելով Աստծո հետ հաղորդակցությունից՝ ընկավ կատարյալ աշխարհասիրության մեջ: Մարդն իր անհավատությամբ ու անհավատարմությամբ սկսեց ձգտել ոչ թե առ Աստված, այլ դեպի աշխարհ, ուստիև՝ ոչ թե բարձրացավ, այլ ընկավ: Այսպես, մարդը մարմնապես ևս զրկվեց աստվածային հավերժական փառքի վայելքից և ապականացու կյանքի «կերակուր» դարձավ՝ ժառանգելով մահը: Ուշագրավ է, որ նույնիսկ անհնազանդությունից և պատվիրանազանցությունից հետո Աստված չի լքում Իր ստեղծած մարդուն, այլ շարունակ պահում է Իր հոգածության ներքո: Ս. Գրիգոր Նազիանզացին ասում է. «Նա, որ սկզբում մարդուն ստեղծեց՝ ազատ ու ինքնիշխան անելով, միայն պատվիրանի օրենքին ենթարկեց նրան և դրախտային բերկրության առատությամբ օժտեց: Առաջին մարդուն հատկացնելով և նվիրելով.... շնորհները՝.... նվիրած եղավ նաև հաջորդող բոլոր սերունդներին»: Եվ ուրեմն՝ նա, ով պահում է պատվիրանը, անձնավորվում է իր ներաշխարհով, գոյավորվում է որպես Աստծո պատկեր, իսկ ստեղծագործելու ձիրքով միանում, համացեղ է դառնում Տիրոջը:

— Պարույր Սևակը բանաստեղծին կոչում էր «Աստծո քարտուղար»: Բանաստեղծներին էլ ներհատուկ են մարգարեանալու և արարելու շնորհը, կյանքը մաքրագործելու, արդարությունը, ճշմարտությունը, բարին և լույսը տարածելու առաքելությունը: Դուք նույնպես ստեղծագործում եք. բանաստեղծությունների, պատմվածքների, վեպերի ու վիպակների հեղինակ եք: Ի՞նչ է ստեղծագործական գործընթացը Ձեզ համար: Կբնութագրե՞ք ներշնչանքի պահի հայտնությունը Ձեր ստեղծագործական ճանապարհին:

— Պարույր Սևակը 20-րդ դարի ամենաինքնատիպ մտածողներից է, հոգևոր հսկա՝ մնայուն ժառանգությամբ: Այո՛, արարչագործություն է նաև ստեղծագործական ընթացքը, քանի որ բուն արարչագործությունը մի կողմից վկայում է Արարչի բացարձակ ու անպարագրելի հատկանիշների և մասնավորապես՝ սիրո մասին, իսկ մյուս կողմից՝ ճանաչեցնելով այդ սերը՝ մեզ ներշնչում ու մղում է երախտագետ լինելու և գիտակցական հավատքով ընդունելու մեր կոչումը և բաժնեկից դառնալու Տիրոջ փառքին:

Ընդսմին արձանագրելի է, որ ստեղծաբանական տիրույթն օժտված է վերժամանակային դերակատարությամբ, որ մտահայությունը յուրաքանչյուր իմացականի ներապրումն է, իսկ արդեն արարչագործելը՝ մարդու և ժամանակի ներդաշնակ ընդելուզման հատկականությունը: Այս ճանապարհին ներշնչանքի աղբյուր կարող է լինել ամեն մի հույզ, անսահման արարչագործության յուրաքանչյուր մանրափոշի:

— Շնորհակալություն հարցազրույցի համար, Հայր Սուրբ:

Հարցազրույցը՝ Մեղրի ՂՈՒԿԱՍՅԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 2.06.2025 թ.
Տպաքանակը՝ 1265